

# Մ Մ Ս Ա Գ Ի Բ


ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877



ՕԳՈՍՏՈՍ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱԶԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ



ԲՏԱՍԱՆԵՄՈՒՄՍԻ  
ԹԻԻ 8.

ԱՄՍԱԳԻՐ

ՕԴՈՍՈՍ 31  
1877.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ  
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆ

Ս. ԳՐՈՅ (\*)

Իսկ արդ յուսարով թէ մեր սոյն յոգուածով կարողացանք ըստ կարի ցոյց տալ Ս. Գրոց ընթերցման եւ ուսման կարեւորութիւնը եւ անհր- բաժեշտ հարկը ամեն սեռի, ամեն տեսակի եւ ամեն աստիճանի մարդոց համար առհասարակ, եւ յուսարով թէ ամեն ուշագիւր եւ բարեմիտ ըն- թերցող սոյն յոգուածի երեք բաժա- նումէն, այն է, թէ՛ նոյն խոկ Ս. Գիր- քէն, թէ՛ մարդկային անհատական կենաց քննութենէն եւ թէ՛ հին հեթա-

նաական եւ արդի քրիստոնէական աշ- խարհի բազմատախան քննութենէն, ապացոյցներով համոզուեցաւ Ս. Գրոց ընթերցման եւ ուսման կարեւորու- թեանն ու սգտակարութեան. դեռ եւս մեր խօսքը չքվերջացուցած խո- նարհաբար կը խնդրեմք ընթերցող պատուական Հայերէն եւ յարգոյ եւ բայրներէն, որ սոյն կարեւոր ուսման այսբան բազմաթիւ օգուտները այս- պէս ակի յայանի տեսնելէ զինի դար- ձեալ վիստակար անհոգութեամբ ան- տարբեր չք գտնուին Ս. Գրոց ուսման

(\*) Շարունակութիւնն եւ վերջ, տես թիւ 7.

հետեւելու . սորա ընթերցումը ամեն մարդ իրեն համար թող մի պարտաւորիչ հարկ ընէ առաջին անգամ և որը գտնէ մի ժամ այնու զետի , մինչև որ զգածուի հոգին նորա վսեմ և բարձր ներշնչութիւններով . բերկրի սիրտը նորա մարտ , վճիտ և անխառն ուրախութիւններով , եւ քաղցրանայ քիմքը նորա մատակարարած զմայլելի քաղցրութեամբ , այնուհետև վրտահ եմ , որ սոյն ճաշակը ստացող որ և է մէկն եթէ բռնագատուի խկ նոյն հոգեղմայլ սրբապուծը թողու , չը պիտի թողու . քանզի այն ժամանակ հոգին սթամբած և զորացած , պիտի պահանջէ ամեն օր իւր պարէնը , ինչպէս կը պահանջէ մարմինն իւր հանապազօրեայ պիտոյքը . և ի՛նչ է հոգւոյն պարէնը , բայց Աստուածային և հոգեւոր ներշնչութիւններէն , որով կը կազմուի , կը զօրանայ և կ'ոգեւորի մարդոց հոգին և կարողութիւն կ'ըստանայ այնպիսի մեծ և գիւցազնական գործեր կատարել , որք մարդկային տը կար կարողութեան քով զարմանալի և անհաւատալի կը թուին . Երանի՛ ուրեմն այն մարդուն , որ կարող կը լինի պահել իւր հոգին այնպէս կենդանի , սթամբ և զգայուն , և հաղար երանի՛ այն մարդուն , որ հանապազօրեայ ընթերցմամբ Ս . Գրոց՝ կը բերկրի անարատ ուրախութեամբ , կը կազդուրուի Աստուածային ներշնչութեամբ , կ'ոգեւորի բարոյական անպարտելի զօրութեամբ , և կը բեղմնաւորի բոլոր մարդիկ առաքինագործութեամբք :

Ս . Գիրքն՝ մանաւանդ Ս . Աւետարանն որ հնոյն ամիրտումը , բացատրութիւնը և լրումն է՝ ինչպէս կ'ասէ Ս . Օգոստինոս՝ թէ “ Նորը հնոյն մէջ ծածկուած եւ հինը նորոյն մէջ բացուած ” այնպիսի վսեմ , բարձր եւ գերբնական զգացումներ կը ներշնչէ

իւր ջերմեռանդն ընթերցողին , որով տկար և սղորմելի մարդն մի զարմանալի յեղափոխութիւն կը կրէ իւր մէջ . որովհետև այն բարձր ներշնչութիւնները ստացող մարդն յանկարծ մերկանալով իւր ամեն բնական տկարութիւնները՝ նոր հոգի , նոր զգացում և նոր զօրութիւն կ'ստանայ , և որով բարրավին մի նոր և տարբեր կեանք կըսկըսի վարել , մի այնպիսի կեանք , որ աշխարհի առաջ իւր նորութեամբ ծաղու և կատականայ կը վիճակի և աշխարհասէր նախատանայ և հալածանայ կենթարկի թերեւս , սակայն իւր մէջ ունի մի այնպիսի ներքին քաղցրութիւն , խղճի անդ որութիւն և հոգւոյ ուրախութիւն , որոց մտ կը յնդին և կ'ոնչւանան այն ամեն արտաքին հարուածներն : Ս . Աւետարանի հոգւով ներշնչուած մարդն ամեն տեսակ վայրահակ և նուաստացուցիչ կիրքերէ ազատուելով , վսեմ , սուրբ և անարատ զգացումներով կը զարգարուի . երկրի գարշութիւններէն ազդականալով , երկնային զմայլմանց մէջ կը թեւապարէ իւր ամբիժ և անարատ հոգովն . աշխարհի ունայն և վաղանցուկ վայրարքը և նուաստաստահ մարդն՝ Աստուածային խօսից ներշնչութեամբ այնքան կը բարձրանայ և այնքան կը մեծանայ , որ իրօք աշխարհի վրայ Աստուծոյ նմանութիւնը ցոյց կը տայ իւր մէջ և այս անհաւատալի թող չը թուի մեզ . քանզի տէրն ինքնին իւր Աստուածային բերանով ըսած է՝ արդէն թէ . “ Ես ասացի թէ Աստուածք իցէք ” :

Աստուածային Ս . Գրոց , մարդկանց հոգիներուն վրայ ըրած այս մեծ

և սքանչելի ներգործութիւնք բանիւ  
չէ կարելի լիով բացատրել, այլ միայն  
հոգւով կրնանք զգալ զգացած են զայս  
ամեն անոնք՝ որք սուրբ սրաիւ և զգա-  
յուն հոգւով Ս. Գրոց ընթերցման կը  
սիրապալին, պիտի կարենան զգալ նաև  
անոնք՝ երբ մի և նոյն սրտով և հոգւով  
նոյն փափաքելի ընթերցման սիրապալին  
և նորա յայտնած Աստուածային վսեմ՝  
վարդապետութեանց վերահասու լի-  
նին. նորա յայտնած փրկարար խորհրդ-  
քոց և յաւիտենական ճշմարտութեանց  
վրայ գաղափար ստանան և նոյն ճրջ-  
մարտութեանց և բարոյական անսրտ-  
գիւտ սկզբանց ծաշակն առնուն. ու  
րոց բարձրութեան, վսեմութեան, ար-  
դարութեան եւ ուղղութեան վրայ  
քրիստոնէական կրօնի մի նշանաւոր  
հակառակորդն անգամ սքանչացած լի-  
նելով՝ համարձակ խոստովանած է իւր  
հոգւոյ զմայլումը և հիացումը. ահա-  
ւասիկ բուն իսկ իւր խօսքերն « Ես  
ինքնին կը խոստովանիմ որ Աստուա-  
ծաշունջ գրոց մեծ վայելութիւնը զիս  
յայտուչ կը կրթէ և Աւետարանի սրբ-  
բուծիւնը սրտիս կը խօսի. նայեցէք  
փրկասփայլոց մատենաները, թէ իրենց  
մեծաշուք հանգիսիւ որչափ փոքր են  
ասոր առջեւ . . . միթէ այս՝ երազա-  
յոյղ ապուշ անձի կամ փառամոլ ա-  
զանգաւորի որոտնդոտս հնչիւնը կըր-  
նայ լինիլ . . . սրպիսի խորամուխ շը-  
նորհ կը տեսնուի նորա հրահանգաց մէջ.  
սրպիսի գերապանծ վսեմութիւն նու-  
րա առաձներուն մէջ և սրպիսի խորին  
իմաստութիւն նորա խօսքերուն մէջ,  
և յայլուր թէ « Աւետարանն է միայն,  
որ բարոյական վարդապետութեան  
մէջ միշտ միակ, միշտ ճշմարտ և միշտ  
միտքան է ինքն իրեն » :

Ուրեմն երբ քրիստոնէական կրօնի  
մի նշանաւոր հակառակորդն անգամ  
Աստուածային մատենի սիրունական

վսեմ, բարձր, սարգ և աղղու ճշմար-  
տութեանց սկզբանց և օրինակաց վը-  
րայ կը հիանայ և կը զմայլի և այս հիա-  
ցումը հրապարակաւ խոստովանելով՝  
Ս. Աւետարանի բարոյական վար-  
դապետութիւնները աշխարհի ամեն  
իմաստնոց, փրկասփայլոց եւ բարո-  
յախօս վարդապետաց սկզբունքներէն  
բարձր, անսոգիւտ և նախադաս կը  
գաւանի. ապա՝ որչափ եւս առաւել  
չը պիտի զգածուի, չը պիտի զմայլի և  
չը պիտի սքանչանայ նոցա վրայ մի  
ճշմարիտ քրիստոնէաց և լուսաւոր հա-  
ւատքի տէր մարդ, երբ հաւատով,  
սիրով և ուշադրութեամբ ընթեռնու-  
Աստուածային մատեններ, սրոյ առա-  
ջին տողէն սկսեալ մինչեւ վերջին տո-  
ղը լի է ամեն սեւի, ամեն վիճակի և  
ամեն հասակի վերաբերեալ իմաստուն  
և օգտակար խրատներով. աշխարհի  
ունայն հարստութեանց և սնտի փա-  
ռաց սաստիկ հետամուտ ընչաքաղց և  
սնափառ մարդն կը գտնէ հոն նա-  
խահոգ մեծատան առածը և կը յան-  
դիմանուի. մարմնոց հեշտութեանց  
գերի եղող թուլամորթ մարդն կը  
գտնէ հոն անառակ որդւոյն պատմու-  
թիւնը եւ կը կրթափի. կրից փորձու-  
թեան մէջ ինկած, աշխարհի դատաս-  
տանէն դատապարտուած և շորտիւնը  
դոց մարդիկներէ նախատակո՞ծ յու-  
սահատ և խղճահար մարդն, կը գըւ-  
նէ հոն շնացող կնոջ գէտը և կը քա-  
ջալերուի. աշխարհի զիպուածական  
ձախորդութիւններէն կործանեալ, սի-  
րելեաց և բարեկամաց մահուան վրայ  
սիրալ խորտակած վշտակիր և աղէկէլ  
մարդն, կը գտնէ հոն արդարոյն Յու-  
բայ համբերատար կեանքը և կ'սփու-  
փուի. վերջապէս թէ՛ նիւթական և  
թէ՛ բարոյական ծանր հարուածոց տակ  
ընկձեալ, անօգնական և ըբեալ մարդիկ  
կը գտնեն հոն Աստուածորդւոյն Յիւ

սուսի այն վշտակիր և բազմաչարչար կեանքը, զոր կնքեց մարդկային անգըթութեան հնարած ամենադառն աման ջանարանին վրայ՝ եղական համբերութեամբ եւ աննման արիութեամբ մինչեւ իւր վերջին հառաջանոց արձակումն աղօթք և բարեմաղթութիւն ընելով իւր անգութ դահձաց համար, և որ մարդն է այն, որ համարձակի իւր վիշտը սոյն վշտաց հետ բաղդատութեան դնել և չը մխիթարուիլ, յիշելով միանգամայն, որ մարդիկ շատ անգամ իրենց գործածներուն արժանի հատուցումը կ'ստանան. իսկ « Սա ապիրատ ինչ ոչ գործեաց » :


Ապա ուրեմն ամեն ատեն և ամեն ժամանակ Ս. Գրոց ընթերցումը պէտք է առաջին հարկ համարինք մեզ. ուրովհետեւ աշխարհի վրայ այն է միայն մարդոյ կարեկից մխիթարարն. իմաստուն դաստիարակը և փորձառու հրահանգիչն, հետեւաբար երբ ունենամք մի որ և է մարմնոյ վիշտ, կամ սրտի բեկումն և կամ խղճի խայթ, պէտք է Ս. Գիրքը ընթեռնումք. երբ մեր կիրքերն և աշխարհի պատրանքներն զմեզ հրապուրելով մտրութեան և փորձութեան մէջ ձգել ուզեն՝ պէտք է Ս. Գիրք կարդանք և նուրաւ մեր հոգին զօրացունենք. երբ աշխարհի ձախարհութիւնք, սեահոգի և չարասիրտ մարդկանց նենգութիւնք, անգութ սրտերու բարբարոսութիւնք մեզ զէմ զինելով զմեզ հալածեն, չարչարեն և մեր սրտերը խոցոտեն, պէտք է Ս. Գիրք կարդանք և Յիսուսի յայտնած Աստուածային և յաւիտենական քաղցրութեամբ քաղցրացունենք մեր սրտի դառնութիւնները եւ երկնային մխիթարութեամբ ավտինք մեր հոգիները. երբ անագորոյն մահը իւր հատու սրովն մեր սիրելիներու կենաց թելը խղելով մեր հայրը, մեր մայրը,

մեր եղբայրը կամ որ և է մի սրտակեցը մեզմէ յախշտակէ մեր սրտերը տրորելով և մեր հոգին դառնութեամբ լեցնելով, այն ատեն եւս պէտք է Ս. Գիրք կարդամք և նորա յաւիտենական յոյսերով մխիթարուինք. վերջապէս մեր ամբողջ կենաց մէջ, թէ ուրախական և թէ տրամական ինչ սրտահար եւս մեզ պատահելու լինի, պէտք է Ս. Գիրք կարդալով, նոցա զօրութիւնը չափաւորեմք և մեղմեմք. որովհետեւ ինչպէս ծայրայեղ տրամութիւնը նոյնպէս և ծայրայեղ ուրախութիւնն հաւասարապէս վնասակար կրնան լինել մարդուս թէ ֆիզիքական և թէ բարոյական կենաց բարեխառնութեան և առողջութեան. հետեւաբար՝ աշխարհի թէ՛ յաջող և թէ՛ ձախող դիպուածներէն չը վնասուելու, մեր սիրտն ու հոգին միշտ Աստուծոյ հետ կապուած մնալու և մեր խիղճը ամեն ժամանակ գոհ և հանգիստ պահելու համար պէտք է մեր բոլոր կենաց մէջ Ս. Գիրքը ընթերցասիրեմք և մեր կեանքը նորա տրամադրութեանց համեմատ ուղղեմք. քաջ գիտնալով, որ առանց Աստուծոյ մեր կեանքը ոչ ինչ է և մեր վախճանը կորուստ. ինչպէս մարմինը առանց հացի չէ կարող ապրիլ, նոյնպէս և հոգին առանց Աստուծոյ խօսքերուն կեանք չունենար. հոգւոյ սնունդն է յաւիտենական կենաց խօսքը, և յաւիտենական կենաց խօսքն է Յիսուսի վարդապետութիւնը, այն է Ս. Աւետարանը. ուստի մեր հոգին ապրելու համար պէտք է Ս. Աւետարանը ուսանի, նորա քաղցրութիւնը ճաշակէ և այնու սնանի, և ահա այս է պատճառն, որ Յիսուս շատ անգամ իւր խօսքերը հացի և ջրոյ նմանեցնելով մի տեղ կ'ըսէ, Ես եմ կենաց հացը. և յայլուր՝ թէ Ես եմ կենաց ջուրը. կենաց հացին համար կ'ըսէ՝ ուտողը չը պիտի

մեռնի եւ կենաց ջրոյն համար , թէ խմողը չը պիտի այլ եւս ծարաւի և սոյն :

Ապա ուրեմն , ամեն բրիտանեայ՝ թէ այր լինի թէ կին , թէ ծեր լինի՝ թէ աղայ , թէ հարուստ լինի թէ աղքատ , թէ մեծատուն լինի և թէ արնանի , եթէ կը սիրէ իւր կեանքը , եւ թէ կը ճանաչէ իւր հոգւոյ արժէքը և եթէ կը փափաքի ապրիլ յաւիտեան , պէտք է Ս . Աւետարանը ուսանի իւր մանկութենէն , որովհետեւ ՚ի մանկութենէ Աւետարանի հոգւով կրթուած երախայն՝ իւր խելահասութեան ժամանակ լիովին կ'զգայ նորա քաղցրութիւնը և իւր կենաց մէջ ցոյց կը տայ նորա պառզնեքը :

Գ . Ս . Շահանքան :



ՁԳՈՒՇԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Ա .

Չգուշաւորութիւն , կամ զգուշ ըլլալ կրտուի , երբ մեր կենակցութեան մէջ առ հասարակ ամեն մարդոյ հետ մի և նոյն եղանակաւ չեմք վարուիր , երբ մեր ճշմարիտ բարեկամները՝ թըշնամիներէն կը զանազանեմք և երբ ամեն մեր դէմն ելողին մեր սիրտը չեմք բանար և ինչ որ կայ այն տեղ թէ մեր անձին նկատմամբ և թէ այլոց , չեմք թափեր անոր առջեւ : Եթէ կենակցութեան մէջ այս եղանակ զգուշաւորութեամբ վարուիմք , կ'ըլլամք Սիրաբայ իմաստունը , որոյ բերանը սրբտին մէջ է , իսկ ընդհակառակը եթէ առ հասարակ ամեն մարդկանց հետ

թէ սուտքիտի լինին , թէ մօլի , թէ բարեկամ և թէ թշնամի , թէ հաւատարիմ եւ թէ անհաւատարիմ , այս ամեն կարգի մարդկանց հետ երբ նման վարմունք կ'ունենամք , կ'ըլլամք այն յիմարը , որոյ սիրտը բերնին մէջ է :

Իրաւ է , որ կան թիւր բարոյախոսներ , որ ըստ իրենց մտքը սկզբանց կ'աշխատին մարդկանց միջէն խարութիւնը վերցնել , կ'աշխատին , որ իմաստունին ՚ի գործ դրած զգուշաւորութիւններն ունայնացնեն եւ յիմարին անզգուշ ու կոյր կեանքը ընդհանրացրնեն . բայց զ՛ւր ջանք եւ ունայն վաստակ է այդպիսեաց աշխատութիւնը . բանի որ բնութեան և Աստուծոյ օրինաց դէմ մղուգին պայքար մի է : Անասունները , որ ընդհանրապէս բընական օրինօք , և մասնաւորապէս բընազգամբ կը կառավարուին , չ'ունին բնական լոյս եւ ոչ բանական հոգի , այնու ամենայնիւ անոնց մէկ ցեղը՝ միւս ցեղին հետ չէ կարող կենակցիլ . նոյն իսկ մի և նոյն ցեղէն ըլլալով հանդերձ եթէ տարբեր դաւառներու մէջ կը բնակին , դարձեալ անխորտի է , որ մի մեանց հետ նման վարմունք ունենան և մի և նոյն բնական համակրութիւնը : Աօրիկայ ամեն որ դիտէ , վասն զի բնտանի կենդանեաց մէջ եւս կը տեսնուի : Ուստի անկարելի է մարդոյն , որ բնական օրէնքէն զատ ունի բնական լոյս , բանական հոգի և հոգեկան ամեն կարողութիւն . կը ճանաչէ , կը խորհի , կը դատէ և կը զգայ , մարդկանց մէջ խափր և զանազանութիւն չը դնէ :

Երբ կը տեսնեմ , որ այս ինչ մարդը զիս կը սիրէ իբրեւ իրեն անձը . իմ օգուտը կը խորհի իբրեւ իրեն անձնական օգուտը . ինձ հետ կը վշտակցի , երբ կը զգայ , որ վշտացած է սիրտս և հոգիս . ինձ հետ կուրախանայ , երբ

կր տեսնե՛, որ հոգիս կը զմայլի եւ կը բերկրի. կը յուսադրէ եւ կը քաջութիւն երբ լքեալ եւ յուսահատ եմ. ինչպէս կարելի է, որ ես եւս փոխադարձաբար չը սիրեմ զինքը. իւր օգտին եւ բարւոյն համար ջանադիր չը լինիմ, չը վշտանամ, երբ վշտոցած է. չ'ուրախակցիմ, երբ ուրախ կը տեսնեմ, չը յուսադրեմ, երբ լքեալ եւ յուսահատ է: Ընդհակառակն մի եւ նոյն ժամանակ երբ կը տեսնեմ ուրիշ մէկը, որ թէ եւ իրեն չարիք մի ըրած չեմ եւ ոչ վնաս մի տուած եմ. այնու ամենայնիւ կ'ատէ զիս օգւտով չափ, գիշեր եւ ցերեկ իմ կորուստս կը նիւթէ, իւր օգուտը եւ շահը իմ կորստեան եւ անկման մէջ կը փնտռէ, իւր սպառիւք իմ անպատուութեան մէջ եւ երջանկութիւնը, եթէ կարելի է երջանկութիւն համարել, իմ ապարազութեան մէջ: Ինչպէս կարելի է որ այսպիսի մէկուն վերայ ջերմ սիրտ ունենամ, համակրութիւն եւ սէր ունենամ ինչպէս առաջին մարդուն վերայ. անձրս հաւատամ անոր, որ արդէն կորստեանս համար դուրս կը փորէ եւ կը պեղէ, կենացս դաւաճանն ու դահիճն է. անարատ սրտիւս անոր ձեռքը յանձնեմ, որ մրտաել ու պղծել զիտէ: Անկարելի եղած է այս 'ի սկըւանէ աչխարհիս եւ պիտի ըլլայ մինչ 'ի վախճան. քանի որ մարդը մարդոյն չը նշմանիր վարքով, բարքով, կեանքով ու կիրքով, անկարելի է միօրինակ կենակցութիւն հաստատել աշխարհի մէջ:

Աշխարհի մէջ միօրինակ կենակցութիւնը անկարելի համարելով՝ նրպատակնիս մարդկանց մէջ ասելու թեան կիրքը բորբոքել եւ զօրացնել չէ եւ ոչ արդարացնել. այլ միմիայն զգուշաւոր կենաց յորդորել. ատելը միշտ վայրենութիւն է. իսկ զգուշութիւնը խմաստութիւն: Ո՛չ մի կրօն քրիստոնէ.

ական կրօնին չափ մարդասիրութիւն եւ եղբայրսիրութիւն ուսուցած է, նորա երկնային հեղինակը եղբայրսիրութիւնը՝ Աստուածսիրութեան հաւասար բարոյեց. այնու ամենայնիւ Նա սրտուիրեց զգուշ լինիլ Փարիսեցւոց խմութեն, այսինքն չար ու նենգաւոր մարդկանց չարութենէն եւ նենգութիւններէն, զգուշ լինիլ անոնցմէ, որ կը գայթակղեցնեն իրենց չար գործերով եւ վատ օրինակներով, զգուշ լինիլ եւ վախնալ անոնցմէ, որ իրենց զեղծ բարոյակաՆով կ'ապականեն ընկերութեան բարքը, անմեղութիւնը կը սորաննեն եւ առաքինութիւնը կը հալածեն. միամիտ լինիլ աղաւնիի պէս, բաց նա եւ խորամանկ օձի չափ, որպէս զի ճանաչն ամեն ծառ իւր սրտուղէն, չը խաբուին գառնազգեստ գայլերէն, յանձնատուր չը լինին խորամանկ աղուսներուն:

Ուրեմն զգուշաւորութիւնը Աւետարանի ուսուցած մէկ սպարաւորութիւնն է. ինչ որ Աւետարանը կ'ուսուցանէ կենսունակ եւ փրկարար է. կենաց աղբիւրը Աւետարանն է. հետեւաբար սվ որ կուղէ անգորրը եւ խաղաղ կեանք ունենալ, անգորրը եւ խաղաղ սիրտ ու խիղճ ունենալ, պէտք է զգուշ լինի իւր կենաց ամեն վայրկեաններուն, զգուշ լինի կենաց ամեն գէղբերուն մէջ, չ'զգուշ խօսելու տանն, զգուշ բարեկամ կամ սրտակից ընտրելու ժամանակ, զգուշ բարերարելու վայրկեանին, որովհետեւ աշխարհ կեղծեաց եւ սպարանաց դաշտ մի է, ցորեն կը ցանես, որով կը քաղես. բարիք կը սփռես, չարիք կը դանես. անկեղծութիւն եւ բարեկամութիւն կը ներշնչես, թշնամութիւն եւ նենգութիւն կ'ընդունիս: Երբէք զգուշաւոր խմաստունը իւր լու ունակութեան երեսէն վնաս մի տեսած չէ. երբէք լուսած չէ, որ այս ինչ որ իւր

չափազանց զգուշաւոր կեանքին հա-  
մար նախատաւած և անպատիւ եղած  
է, արհամարուած է ընկերականու-  
թենէն, արտօքսուած է միաբանական  
կեանքէ. բայց ընդհակառակին ամեն  
օր, ամեն վայրկեան կը տեսնեմք յի-  
մար անդգուշին կրամ ազնաները. ա-  
մեն ժամանակ կը տեսնեմք, որ ան-  
զգուշը փնասակար եղած է թէ իր  
անձին և թէ այլոց, վերջապէս կեանքի  
ամեն քայլափոխին կը պատահիմք թըշ-  
ուառ անդգուշին, որ կամ 'ի դատա-  
բան և կամ 'ի բանտ կը տանին:

Բ.

Ամեն տեսակ զգուշաւորութենէն  
կարեւորագոյնն է լեզուի, կամ խօսե-  
լու զգուշաւորութիւնը. որովհետեւ  
աշխարհի մէջ չը կայ աղէտ մի, չը կայ  
թշուառութի մի, որ լեզուի անզգուշու-  
թենէն յառաջ եկած չը լինի. ամեն  
մեղք ամեն չարիք ճնունդ են անասնձ  
լեզուի և անգուռն բերնի: Առզէս  
կեանքդ քաղցրայնել, պատիւ և ար-  
ժանիք ունենալ ընկերութեան մէջ,  
լեզուդ սանձելու իմաստութիւնը ու-  
նեցիր. դարձեալ կուղէս ապերջանիկ  
կեանք ունենալ և անպատուութեան  
աղմին մէջ թաւալել. լեզուիդ սանձը  
խղէ և բերնիդ փականքը խորտակէ.  
կարող ես այնուհետեւ ամեն չարիք  
գիրութեամբ գործել, անհատներ և  
ընտանիքներ բարոյապէս սպաննել,  
քաղաքներ և ազգեր յուզել և երկ-  
պառակել, եղբայր՝ եղբօր դէմ զն-  
նել, հայրը՝ որդւոյն, որդին՝ հօրը հետ  
թշնամայնել, անկեղծ բարեկամներ  
միմեանց դէմ կասկածներով ընուլ:  
Վերջապէս լեզուն է, որ աշխարհի խա-  
ղաղութիւն կը տայ եւ լեզուն է, որ  
մէկ խօսքով, մէկ բառով աշխարհի  
խաղապութիւնը կը բառնայ և պատե-

լաղմի հորը կը բորբոքէ. լեզուն է,  
որ շառ անգամ աշխարհուէր զենքե-  
րը՝ աշխարհաշէն գործիներու կը փո-  
խէ, մարդասպան սուրերն՝ խօփ ու  
մանգաղ կը ձուլէ և դարձեալ լեզուն  
է, որ ընդհակառակն շառ անգամ  
խօփն ու մանգաղը դաշոյն կ'ընէ և ւ-  
զրիչն իսկ՝ եղբայրասպան նեռ: Ահա  
լեզուն, որ զգուշաւորութեամբ աշ-  
խարհ կը շինէ, իսկ անզգուշութեամբ  
ղաշխարհ յաւեր և յապականութիւն  
կը դարձուցանէ:

Արեւմն զգուշաւոր լեզուէն աւելի  
օգտակար բան մի չը կայ, և ո՛չ վրան-  
գաւոր՝ անզգուշ լեզուէն: Ասն մար-  
դիկ, որք բողբոջիլն ապէտ՝ անկարող  
են պէտք եղած զգուշութիւններն բ-  
նել, անկարող են սանձել իրենց լեզուն,  
կ'աւերեն առանց զգալու. կը շինեն  
առանց զխտակցութեան, կը վերաու-  
րեն առանց նպատակի, կը բուժեն  
յանգէտս. այսպիսի կեանքը չը զանա-  
ղանիր անասնական կեանքէն, որ բեր-  
ման և դիպաց հոսանաց տղջեւ խա-  
ղաղիք մի է: Բայց կան ալ մարդիկ, որ  
ապէտ չեն, անպատուութիւն կը հա-  
մարեն իրենց անձին ապխտութիւնը և  
ապէտին հետ կենակցելը. Սոզոմնի  
իմաստութենէն աւելի իմաստութիւն  
ունենալ կը կարծեն. գիտեն կենաց  
ինչ ըլլալը, գիտեն մարդկային ընկե-  
րականութեան պէտքերը, անոնց աղ-  
բիւրները, ինչ միջոցներով ձեռք բեր-  
ուիլը, այլ սակայն աւելի այդպիսինե-  
րն, որ իրենք զիրենք ընկերականու-  
թեան մեծ բարեբաղններն կը համարին,  
իրենց անասնձ լեզուաւ ընկերականու-  
թեան անգորրութիւնը կը ատղնա-  
պեն, ընտանեկան խաղաղ յարկեր խը-  
ռովութեանց և յուղմանց սլեաց կը  
մասնեն. ժողովրդոց դարաւոր ծա-  
ւայութիւնը և հաւատարմութիւնը  
կասկածանաց կենթարկեն յաչս տի-


րոյ իշխանութեան և այսպէս անհր-  
 նարին աղէտներ և վիշտեր կը կուտա-  
 կեն հասարակութեան գլխուն: Այս  
 պիտի լեզուները մարդկութեան ցեցե-  
 րըն են, որ կ'ապականեն կեանքը,  
 կ'ապականեն մարդկային արժանիքը,  
 կ'անդամհատեն տաղանդն ու հան-  
 ճարը և կը նսեմացնեն իմացականու-  
 թիւնը:

Լեզուն, որ Աստուծոյ մարդկանց  
 շնորհած գերագոյն պարգեւներէն մին  
 է, որով մարդը կը զանազանի անբա-  
 նէն, հոգին՝ նիւթէն, բանականու-  
 թիւնը կը տիրէ անբանութեան՝ չա-  
 րութեան միջոցաւ ընկերականութեան  
 մեծ պատուհաս մի եղած է. կը խոցէ,  
 կը վերաւորէ և կը մահացնէ սիրոյ դի-  
 մակաւ, կը թիւնաւորէ մեղը ջամբե-  
 լով: Ի՞նչ պէտք է ընել երկնից այս մեծ  
 պարգեւը իւր նպատակին ծառայեցը-  
 նելու համար, մարդկութեան այս  
 մահաբեր ակտը դարմանելու համար:  
 Ս. Քիրքը, որ ամեն բարոյական ցա-  
 ւերու մեծ բժիշկն է, կը պատուիրէ  
 դագրեցնել լեզուն չարութենէ և շքը  
 թունքն նենդութիւն խօսելէ. դար-  
 ման մի, որ շատ դժուար և շատ դիւ-  
 րին է. դժուար է, որովհետեւ ակտը  
 ընդհանուր է, չարութիւն ու նենդու-  
 թիւն խորհել և խօսելը գրեթէ մօրը  
 դիրին եզող մանկիկէն սկսեալ՝ մինչեւ  
 գերեզմանին դուռն հասնող ճերտնին,  
 որ սակաւիկ մի եւս իւր յետին հրա-  
 ժեշտը պիտի տայ աշխարհին, սով-  
 րութիւն եղած է իբրեւ պարտաւո-  
 րութիւն. մտնուկը իւր հասակակցին,  
 մանկան դէմ չարութիւն և նենդու-  
 թիւն կը նիւթէ և կը խօսի. երիտա-  
 սարդը՝ երիտասարդին և ճերտնիին  
 դէմ. իսկ ճերտնին թերեւս ամեն հա-  
 սակի դէմ: Քիւրքն և շատ դիւրին է  
 այս համաճարակ հիւանդութիւնը բը-  
 ժըշկելը, եթէ ճնողը իրենց որդւոց,

ուսուցիչք՝ իրենց աշակերտաց, հո-  
 գեւոր հովիւք՝ իրենց հօտին ուսու-  
 ցանէն ըստ իրենց որբագան կաշման  
 լեզուի մեծ պաշտօնը. ուսուցանեն  
 երկիւղած խորհրգածութեամբ լեզուի  
 նուիրական պարտաւորութիւնը, ան-  
 ջինջ գրոշմէն նոցա մտքին եւ սրտին  
 մէջ, որ Աստուած տուած է այս գե-  
 րագոյն շնորհը մարդոյն միմիայն զինքն  
 օրհնելու, մեր պէտքերը, մեր ցաւե-  
 րը և վիշտերը իրեն ներկայացնելու.  
 իւր փառաց և մեծութեան հռչակ ու  
 բարող լինելու, վշտացեալ եղբայր մի  
 միթիթարելու, յուսահատութիւնը քա-  
 ջալերելու և մեր ունեցած շնորհները,  
 տաղանդը և բարի ունակութիւնները  
 մեր նմանեաց հաղորդելու. երբ լե-  
 զուի այս մեծ պաշտօնը կը գրուի սքը-  
 տերու մէջ, չարութեան և նենդու-  
 թեան կրակը իսպառ կը մարի. ընկե-  
 րականութեան կեանքը արդի սպա-  
 կանեալ կացութենէն կը փրկուի, բա-  
 րոյական կեանքը կը սրբուի, մարդը  
 կը բարձրանայ և արժանիքը կը վար-  
 ձասրուի:

Արջափ երջանիկ պիտի լինէին ազ-  
 գերը. քանի խաղաղ և անգորր պի-  
 աի լինէր մարդոյն վիճակը, եթէ ծը-  
 նողք, ուսուցիչք և հոգեւոր հովիւք  
 իրենց պարտաւորութիւնը կատարե-  
 լով խղճի մտքը՝ լեզուն աստուածագիծ  
 սահմանին մէջ պահպանէին: Բայց սով  
 պիտի ուսուցանէ ասոնց, որ շատ ան-  
 դամ ինքեանք կ'եղծանեն լեզուի ա-  
 մեն որբագան օրէնքները. սով պիտի  
 ուսուցանէ անոնց, որք կոչումն ունին  
 հրապարակաւ ժողովրդեան բարոյա-  
 կանութեան ուղղութեանը հոգ տա-  
 նելու, նորա լուսաւորութեան և յա-  
 ուժադիմութեան համար հաւատար-  
 մաբար աշխատելու, այլ սակայն իրենց  
 անսանձ լեզուաւ և անդուռն բերա-  
 նով պատճառ կը լինին ժողովրդեան

բարուց տղտկանութեան . պատճառ  
կը լինին ժողովրդեան ազէտից և թըշ  
ուառութեան . կ'տանահարին նորա  
յառաջագիմնութիւնը . մանաւանդ՝  
վերջի ատեններս , այս փսփուկ ժա-  
մանակիս մէջ , մի քանի խմբազիրներ ,  
իրենց ապիրատութեան ծարաբոյն  
փորձը տուին , իրենց անդգուշ լեզու  
գրեթէ մինչև ազգամատնութեան գը-  
ժսխային դերեր կը խաղայ . . . . .  
Լաեմք և մեք , որպէս զի մի գուցէ  
մեր սրտի կրակիծէն մեղանչեմք լեզուի  
նուիրական օրինաց դէմ :



**ՄԱՐԴԱՅԻՆ ԿԵԱՆՔ**

(Շարունակութիւն , տես թիւ 7 .)

**Դ . Մերոսկիւն :**

Ամենայն ինչ կը փոփոխի բնու-  
թեան մէջ , ամենայն ինչ դէպ յապա-  
կանութիւն կը դիմէ : Մարդկային մար-  
մինն եւս հազիւ հասած կը լինի կու-  
տարելութեան կէտին և անագան կը  
սխտի զօրութեան , հաստատութեան  
եւ կարողութեանց սոյն բարձրագոյն  
կատարէն աստիճանաբար դէպ 'ի վար  
խոնարհիլ . օր ըստ օրէ ամենայն ինչ  
կըսպառի , կ'ապականի և կ'ոչնչանայ  
վերջապէս : Փոխխառութիւններն ու կո-  
րուտոր բաղմամբիւ տարիներ անդգու-  
լի կը մնան , մինչեւ որ արտաքին նը-  
կարաշիրներ ու նշաններ ապացուցա-  
նեն զանոնք . սակայն եթէ մեք մոռ-  
դիր զնեմք մ'ը ներքին կարողու-  
թեանց միջոցաւ մեր կենաց վիճակը ,  
եթէ չպատրեմք մեք զմ'ը յուսով և

անձնասիրութեան տենչանօք , վաղ  
կարեմք զգալ մեր տարիներու ծան-  
րութիւնն , խմանալ մեր ներքին և ար-  
տաքին կարողութեանց նուազումը և  
ճանաչել մ'ը կենաց յաջորդական ըս-  
պառումը :

Երբ մարմինը ընդունած կ'ըլլայ  
աճման կատարելութիւնը թէ երկայ-  
նութեամբ և թէ լայնութեամբ , կը  
սխտի այնուհետեւ առաւելուլ հաս-  
տութեամբ , այս սկզբնաւորութիւնը  
սպառման առաջին ձեռնարկն է . ու-  
րովհետեւ այս առաւելութիւնը ներ-  
քին աճման կամ տարածութեան չա-  
րունակութիւնն ջըլլալով , չեն կրնար  
մասնակցիլ այսմ մարմնոյն ամեն մա-  
տուներբը և ստանալ ոյժ եւ զօրու-  
թիւն . այլ յաւելեալ հիւթերէ յա-  
ռաջ եկած ըլլալով՝ կը բեռնաւորէ  
մարմինը անօգուտ ծանրութեամբ մը :  
Այս հիւթը ճարպն է , որ կը սխտի դու-  
յանալ սոխորաբար 35 կամ 40% տար-  
ւոյն մէջ , և որչափ սա աւելնայ , մար-  
մինը կը տկարանայ , կը կորուսանէ իւր  
թեթեւութիւնն ու արագաշարժու-  
թիւնը , տեսակի յաջորդութեան զօ-  
բութիւնը կը նուազի , անդամները կը  
գանդաղին և քանի որ տարածութիւ-  
նըն աճի , կարողութիւնը կը պակսին :

Բաց յայտմանէ , սակորներն և մար-  
մնոյն այլ կարծր մասերն եւս ընդու-  
նած ըլլալով իրենց կատարեալ տա-  
րածութիւնը թէ երկայնութեամբ և  
թէ լայնութեամբ , կը սխտին այնուհե-  
տեւ աւելի ևս կարծրանալ . սնուցիչ  
չարտանիւթք , որք առաջ ծաւալի  
աճման կը ծառայէին , կը սխտին միմխոյն  
զանգուածն յաւելուլ ներմուծուելով  
այս մոտանց մէջ , որով հետզհետէ  
կարծրանալով , թաղանգները՝ կ'ոճկա-  
ւոր , կ'ոճիկներն սակրաւոր և սակրք  
աւելի կ'ործր մարմններ կ'ըլլան . բո-  
լոր նուրբ և մանր թելերն կը պնդա-

նան, մարթը կը չորանայ, կնճիւններն  
 հետզհետէ կը կազմաւորին, մազերը  
 կը սպիտականան, ատամները կ'իջնան,  
 դէմքը կ'այլակերպի, մարմինը կը կո-  
 րանայ և բազմաթիւ տարիներու ծան-  
 բուժեան տակ ճնշուելով խտուռ ան-  
 քործութեան և անշարժութեան կը  
 մտնուի, որով մահը յաջորդելով  
 կեանքը կը վերջանայ: Վիճակի այս  
 փոփոխութիւնները կը սկսին նուազ  
 երեւիլ 30ր տարիէն առաջ եւ հետ-  
 զհետէ կը յայտնուին մինչեւ 60-70ր  
 տարին, ուր անկարողութիւնը կը տի-  
 բէ, զստամութիւնն կը յաջորդէ եւ  
 հասարակօրէն 90-100ր տարին սոցա-  
 սուս կատարելագործուելով՝ ճերու-  
 թիւնը՝ ընդ նմին և կեանքը կը վերջա-  
 նայ:

Աւելորդ չը լինիր մասնաւոր ախ-  
 նարի մի ձգել մարդկային կենաց այս  
 նշանաւոր կէտին վըստ եւս, և հետա-  
 զօքսել այս սպառման և բազալուծման  
 ոչ ստճառները:

Ոսկերք՝ որք մարմնոյն կարծրագոյն  
 մասերն են, 'ի սկզբան կը կազմուին  
 ասորածական նիւթական թելերէ, որք  
 հետզհետէ կը ստանան իրենց սովորա-  
 կան պնդութիւնն ու կարծրութիւնը:  
 Այս թելերը պատուած են արտա-  
 քուսա և 'ի ներքուստ թաղանթնե-  
 րով, որք ոսկրային հիւթ կազմելով  
 կամ իրենք ոսկրանալով, կը տան ա-  
 ճուսն ոսկերաց: Եւ երբ ոսկերք ըս-  
 տացած ըլլան իրենց աճման կտտարե-  
 չութիւնը և կրկին ոսկերաց թաղանթ-  
 ները տոբրածական հիւթ չկարենան  
 արտադրել, այն ատեն շաքարանիւթը,  
 ինչպէս քրիկը, ոսկերաց մէջ ներմուծուէ  
 լով միմիայն կարծրութիւնը կ'առաւե-  
 լըն, վասն զի աճումն արդէն դադարած  
 կ'ըլլայ, և յետ ժամանակաց ոսկերք  
 այն ատիճան կը խտանան, որ չ'են  
 կրնար ոչ եւս շաքարանիւթն ընդու-

նիլ, որ զիրենք պէտք է անուցաներ,  
 ահա այս կեանն ոսկերք կը սկսին ա-  
 պականիլ եւ այս ապականութիւնը  
 մարմնոց կորստեան առաջին պատճառ-  
 ներէն մին է:

Կռճիկները, զորս կարելի է կու-  
 կուղ և անկատար ոսկորներ համա-  
 բել, կ'ընդունին, ինչպէս ոսկորներն,  
 շաքարանիւթը, որ նոցա խտութիւնը  
 կ'առաւելու: և քանի որ հասակն յա-  
 ռաջանայ սոքա եւս կը խտանան և ճե-  
 բութեան ատեն դրեթէ ոսկրային վի-  
 ճակ կըստանան. որով յօդակապերու  
 շարժումները կը դժուարանան և վեր-  
 ջապէս կը վերջացնեն ամեն շարժումն  
 ու ամբողջական անգործութեան եւ  
 մեռելութեան կը մտանեն մարմնոց մա-  
 սունքը. ահա կորստեան երկրորդ նը-  
 շանաւոր և աւելի յայտնի պատճառը:

Թաղանթները, որոց բաղկացու-  
 թիւնը շատ նմանութիւն ունի կրճը-  
 կաց հետ, կը ստանան նմանապէս յա-  
 ջորդական խտութիւն. վասն զի երբ  
 աճմանէ դադարին, իրենց տարածակա-  
 նութիւնը կը կորուստենն եւ ընդու-  
 նուած հիւթերը միմիայն զանգուածը  
 կ'աւելցնեն առանց աճման պիտանի  
 ըլլալու: ուստի քանի որ տարիքն աւ-  
 ւելնայ, ասոնք եւս կը կարծրանան և  
 կը չորանան: Այսպէս է նաև ջլերուն  
 և մարմինը կազմող նեարդերուն հա-  
 մար: Մարմինը կը կարծրանայ քանի  
 որ մարդ դէպ 'ի ճերութիւն յառա-  
 ջանայ. թէեւ արտաքին շջափմամբ  
 այս տեսութիւնը հակառակ կը գրա-  
 նուի, վասն զի առայդ երիտասարդու-  
 թեան ատեն մարմինը աւելի հոծ և  
 պինդ կը տեսնուի, մինչդեռ ընդ հակա-  
 ոսկն ճերութեան ատեն թոյլ և կա-  
 կուղ, բայց պէտք է համոզուիլ որ այս  
 երեւոյթը մորթէն կը սրտաճառի և ոչ  
 մարմնէն: Արք մարթը լաւ պրկուած  
 ըլլայ, ինչպէս է երիտասարդութեան


տանն , մարմինը , թէև նուազ պինդ , խիստ կը թուի շոշափմամբ . այս պընդու-թիւնը կըստի նուազիւ , երբ ճարպը կը գոյանայ մարմնոյն եւ մորթին մէջ . քանի որ ճարպը աւելնայ , մորթը կը տարածուի և յետոյ երբ ճարպը կըստի նուազիւ , մորթը կ'ամփոփի և մարմինը աւելի կ'սկզբնուի . ուրեմն այս կ'ակզու-թիւնը մորթէն կը պատճառի և ոչ մարմնէն : Մատաղ կենդանեաց միայն աւելի կ'ակզու-թիւնը և զիւրամարս է . մինչդեռ չափահասներու-նը կարծր , չոր և անմարսելի :

Մորթը կրնայ տարածուիլ քանի որ մարմնոյ ծաւալը աւելնայ և երբ մարմնոյ ծաւալը սկսի նուազիւ , մորթը կ'ամփոփի և կեճիւններ ու խորշեր կը կազմէ , որք ձերութեան անջնջելի նը-շաններ են :

Այսպէս ահա որչափ մարդ հասակն առնէ՝ ոսկորներն , կոճիկները , միսը , մորթը և մարմնոյն բոլոր նեարդերը կը խտանան , կը պնդանան և կը չորանան . ամեն մասերը կը քաշուին կ'ամփոփին , ամեն շարժումները կը դանդաղին կը դժուարանան , ներքին հեղուկներու շրջանները սնազատ կը մնան , շնչառութիւնը կը պակասի . հիւ-թոց կանոնաւոր բաժանումն կը խանգարուի , կերակրոց մարսողութիւնը կը ծանրանայ , սնուցիչ շաքարա-նիւթը մարմնոյ կարծրացեալ մասանց մէջ չ'ընտրուի ներմուծուիլ անպիտան կը մնան և արդէն մարմնոյն զանազան կարծր մասերն անսնունդ մնալով կը մեռնին : Մարմինը սակաւ առ սակաւ և մաս առ մաս դէպ 'ի յաւիտենական անշարժութիւն կը դիմէ , շարժումները կը նուազին աստիճանաբար , կեանքը կը շիջանի յաջորդաբար և մահը՝ այս յաջորդական աստիճանաց վերջինն , կը կարէ և կը վերջացնէ կենաց շքե-թայն :

Որովհետեւ ոսկորներն , կոճիկները , ջղերը և մարմնոյ այլ մասերը աւելի փափուկ և կ'սկզբնուի են կանանց մէջ քան արունց , ուստի աւելի երկար ժամանակ պէտք է որ կանայք ստանան իրենց մարմնոյ այլ և այլ մասանց վերջին խտութիւնը , որ կը պատճառէ մահը . հետեւաբար կանայք պէտք է որ աւելի ձերանան քան արք , ինչպէս և սովորաբար կը պատահի : Այսպէս են նաեւ այն մարդիկ , որք տկար և կանացի կազմութիւն ունին արտաքուստ . ասոնք աւելի կ'ապրին քան զայնս , որք ուժեղ և մտեղ կ'երեւին : Նոյնպէս , երկու սեռի մէջ ալ , նորա՝ որոց ածու մը ուշ կը հասնի կատարելութեան աստիճանին , աւելի երկար կ'ապրին , որովհետեւ այսպիսեաց ոսկորներն , կոճիկներն , ջղերը և այլն , աւելի ուշ կըստանան խտութեան վերջին աստիճանը : Կենաց ամբողջական տեւողութիւնը կախումն ունի աճման տեւողութենէն . թէ՛ կենդանի և թէ՛ տուճի , որ երկար ժամանակի մէջ կըստանայ աճումն , երկար ժամանակ ալ կը տուէ նորա կեանքը , և փախադարձաբար , անոնք որ շուտ կը դադարին աճմանէ , սնազան եւս կը հասնի նոցա վախճանը :

(Շարունակելի :)



# ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

## ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՐԶ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն, տե՛ս թիւ 7.)

### ԳԼՈՒԽ Ը .

#### ՏԱՐՐԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Բաղադրու. փիւնք. - Տարրաբաշխու. փիւնք.  
- Պարզ եւ բաղադրեալ մարմինք. - Խոռո-  
նուղղք. - Բաղադրու. փիւն ջրոյ. - Այլ եւ  
այլ ջուրեր, այն է անձրեւի, աղբիւրի,  
անհիւնի, եւ այլն. - Հանքային ջուրեր.  
Տո՛վու, ջուրեր :

ՕՐ. ԹԱԳՈՒՂԻ. - Ար պատմուի թէ  
Սանդրիլեօն (1) կրակարանի անկիւնը քա-  
չուած մէն միայնակ կը մնար. քայց իւր  
կնքամայրն, բարեսիրտ պայիկ մը, գա-  
ւազանի մը հարուածով անոր ցնցոտի-  
ները փառաւոր զարգուց փոխարկեց  
և դդուճ մ'ալ կառքի. կարծեմ թէ  
մողէ՞ղներն ալ՝ աշխուժ ձիերու, մու-  
կերն ալ՝ սոյսաւորներու և խարաղան  
մ'ալ՝ կառալարի : Սանդրիլեօն 'ի պա-  
րահանդէս գնաց :

Գիտաւորութիւնն չ'ունիմ ձեզ այս  
օրինակ կերպարանափոխութեանց վը-  
րայ խօսիլ : Սակայն ասոնցմէ քանի մը  
հաստ գիտեմ, որ նոյնպէս հրաշալի են  
և միանգամայն ճշմարիտ :

ՄԱՐԻԱՄ. - Պատմեցէք մեզ, օրիորդ,  
ՕՐ. ԹԱԳ. - Գիտէք որ օդապարիկ-  
ները կազով մը կ'ուռեցնեն. այս կա-  
զը, երբ ուրիշ մարմնայ մը հետ միա-  
նայ, որ բնածոխ կը կոչուի և հասա-  
րակ ածուխէն տարբերութիւն մը չու-  
նի, փողոցներն ու վաճառանոցները

(1) Սանդրիլեօն փորրիկ աղջիկ մ' էր, որ երբեք  
կրակարանի անկիւնէն չէր հեռանար :

լուսաւորելու համար կը գործածուի :  
Կը ձանաչէք այս կազը : Երբ զայն է-  
րեկոյին վառել ուղեն, զինքն բերող  
խողովակին ծորակը կը բանան եւ  
լուցիկի մը կը մօտեցնեն, որով անմիջա-  
պէս կապտագոյն սպիտակ դեղեցիկ  
բոց մը կը սկսի երևի իր Ահա այս կազը  
ջրածին կը կոչուի :

Օդոյ մէջ ուրիշ կազ մ'ալ կայ, ա-  
ռանց որոյ չէնք կրնար սայրիլ, սրով-  
հետեւ զայն կը շնչենք եւ մեր շնչա-  
ուութեան համար անհրաժեշտ է, այս  
կազը ինտրա՞ծին կը կոչուի :

ՅԱԿՈՒԲ. - Ինչո՞ւ համար այս կազե-  
րուն վրայ կը խօսիք մեզ. միթէ ասոնք  
կրնան ուրիշ բանի մը փոխուիլ Սանա-  
րիլեօնի դդուճին նման :

ՕՐ. ԹԱԳ. - Այո՛, երբ այս ինչ  
պայմաններով այս երկու կազերն իրա-  
րու մօտեցնենք, ուժգնութեամբ ի-  
րարու կը դիմեն, շառաչուեն մը կը լը-  
սուի, ետքը ճարձատիւն մը, յորմէ  
յետոյ ոչ ջրածին կը տեսնուի եւ ոչ  
թթուածին, այլ անոնց տեղ կատարե-  
լապէս տարբեր բան մը :

ՄԱՐ. - Ի՞նչ բան :  
ՕՐ. ԹԱԳ. - Գիտցիր :  
ՄԱՐ. - Ի՞նչպէս կուղէք, որ գիտ-  
նամ :

ՕՐ. ԹԱԳ. - Արդարեւ գիտնալը  
դժուարին է, որովհետեւ ասիկա նոյն  
կազերէն և ոչ մէկուն չը նմանիր :

ՄԱՐ. - Ի՞նչ է ուրեմն :  
ՕՐ. ԹԱԳ. - Զուր :  
ՄԱՐ. - Զուր :

ՕՐ. ԹԱԳ. - Այո՛, ջուր, ջինջ եւ  
յստակ ջուր, վերջապէս զուտ ջուր :  
ՅՕ.Կ. - Ուրեմն ջրածինով և թը-  
թուածինով անձամբ կրնամ ջուր շնչ-  
նել :

ՕՐ. ԹԱԳ. - Այո՛, քայց ասոր հա-  
մար քանի մը պայմաններ հարկաւոր  
են : Զոր օրինակ երբ այս երկու կա-

ղերն իրարու մտայններ, պէտք է որ ջրածնի ծաւալը թթուածնի ծաւալին կրկինն ըլլայ : Յրինակի համար, եթէ մէկ լիդր թթուածին առնենք, պէտք է երկու լիդր ջրածին առնել. եթէ երկու լիդր թթուածին առնենք, պէտք է չորս լիդր ջրածին առնել. վերջուպէս միշտ պէտք է այս վերջինէն կրկին ծաւալով առնել. Եւ որպէս զի այս կերպարանափոխութիւնը կատարուի, պէտք է նաեւ այս կազերը ստատիկ տաքցնել կամ որ նոյն է ճնշել. վասն զի ճնշմամբ կը տաքնան :

ՄԱՐ. — Մեզ ուրիշ կերպարանափոխութիւններ ալ կը պատմէք :

ՕՐ. ԹԱԳ. — Եթէ ուղեմ ձեզ անոնց վրայ խօսիլ վերջը չը գար, որովհետեւ գրեթէ բոլոր մարմիններն, եթէ քանի մը պայմաններով, ուրիշ մարմնոց մտայններ, միանալով՝ կը կերպարանափոխուին և ուրիշ մարմիններ կը կազմեն, որոնք զիրենք յառաջ բերողներէն բոլորովին կը տարբերին : Այս օրինակ կերպարանափոխութիւնները Տարրաբանական Բաղադրութիւնն կը կազմեն և կերպարանափոխուած մարմինները՝ Բաղադրուած մարմին, իսկ զանոնք կազմողները՝ Պարզ մարմին :

ՄԱՐ. — Ջուրն ի՞նչ է :

ՕՐ. ԹԱԳ. — Ջուրը բաղադրուած մարմին մ'է. որովհետեւ իւր մէջ ջրածին և թթուածին կոյ :

ՄԱՐ. — Ուրեմն ջրածինը պարզ մարմին մ'է :

ՕՐ. ԹԱԳ. — Այո՛, նոյնպէս նաեւ թթուածինը : Մասնաւոր գիտութիւն մը կայ, այն է Տարրաբանութիւն, որ այս բաղադրութեանց և տարրաբաշխութեանց վրայ կը խօսի : Տարրաբաններ կան, որ նոր բաղադրութիւններ կամ նոր տարրաբաշխութիւններ խուզարկելով՝ իրենց կեանքը կ'անցնեն, որպէս զի նոր մարմիններ յառաջ բե-

րեն կամ բնութեան մէջ արգէն գրանուածներն ինքնին կարողանան կազմել : Եստ խուզարկութիւններ ըրած են ոսկի շինելու համար, և քանի մ'անձինք այնչափ սիրահարեցան այս խուզարկութեանց, որով գրեթէ յիմարեցան. ասոնք ուխտոյց կը կոչուին :

ՅԱԿ. — Յաջողեցա՞ն :

ՕՐ. ԹԱԳ. — Տակաւին ոսկի չ'են կրնար շինել. բայց ամեն օր նոր բաղադրութիւններ կը գտնեն :

ՅԱԿ. — Ուրեմն ի՞նչ բանի կը ծառայեն այդ վիւտերը :

ՕՐ. ԹԱԳ. — Ուրեմն դու ալ ոսկեխոյզներու նման կը մտածես, և կարծես թէ աշխարհիս մէջ ոսկիէն զատ թանկագին բան չը կայ : Սակայն ոսկին ի՞նչ բանի պիտի ծառայէր մեզ, եթէ անով գնուելիք բաները հնարուած չըլլային : Միշտ նոր բաղադրութիւններ խուզարկելով՝ հետզհետէ գանձուեցան ապակին, որ լուսոյ մեր պատահաններէն ներս մանելուն արդելք չըլլով՝ զմեզ յրաէն կը պահպանէ : Օճառը, որով լուսոցք կ'ընենք, շաքարը, որ մեր որկրամուրութեան կը նպաստէ, մեղանն ու թուղթը, որ մեզ մեր հեռաւոր սիրելիներուն հետ թղթակցելու կը ծառայեն, նորանոր դոյներ, որ մեր կերպասները ներկելու և պատկերաց մէջ բնութեան համոնմանելու կ'օգնեն, դեղեր, որ մեր հիւանդութիւնները դարմանելու համար կը գործածուին, և այլն, Եւ գիտես թէ այս բոլոր բաներն ի՞նչպէս կը շինուին. — Անհաւատալի կերպարանափոխութիւններով : Այս մասին միայն երկու օրինակ պիտի տամքեղ : Եստ անգամ տեսած ես, որ աղբիւսներու մէջէն հին ցնցոտիներ եւ հին ոսկորներ կը հաւաքեն, գիտես թէ ատոնք ի՞նչ բանի կը ծառայեն. — Հին ցնցոտիները յղկեալ սպիտակ թուղ-

Թեր կ'ըլլան, որոյ վերայ սիրուն գի-  
րեր կը գրես, և հին ստիգները՝ ամխոյ  
վերածուելով՝ ամսորժանօք կերամ շա-  
բարներդ կը ձերմկցնեն :

ՄԱՐ. — Իրաւ, ինչ նոյնպիսի բան :

ՕՐ. ԹԱԳ. — Ամենեւին, որովհե-  
տեւ կերպարանափոխութիւնը կատա-  
րեալ է. ասորբարաներն ամենէն աղ-  
տաղանի բաններն իսկ գեղաշուք զար-  
գաց և առաջին կորգի օգտակար ի-  
րայ կը փոխարկեն իրենց գիտական  
գաւաղանի հարուածով, որ Սանտրի-  
եօնի կիբամօր գաւաղանի հարուա-  
ծէն աւելի մեծ արժէք ունի :

ՅԱԿ. — Եթէ ողջ մնամ, տարբա-  
բանութիւն պիտի ստրվիմ :

ՄԱՐ. — Ես ալ :

ՅԱԿ. — Զրածինով ու թթուածի-  
նով շինուած ջուրը բարեհամ է :

ՕՐ. ԹԱԳ. — Անհամ է, որովհետեւ  
մէջը օդ չըկայ : Մեր խմած ջուրը միշտ  
բիչ մ'օդ կը պարունակէ. եւ ահա  
այս է պատճառը, որ ձուկերը կրնան  
ջրոյ մէջ շնչել եւ ապրիլ : Երբ օտոր  
բիւրեղի նման յատակ չըլլայ, իւր մէջ  
տեսնուած պարապութիւններն ընդ-  
հանրապէս ներփակուած փոքրիկ օ-  
գադնտիկներ են : Երբ ջուրը անհամ  
ըլլայ իւր մէջ օդ չըլլալուն պատճա-  
ռաւ, որ երբեմն կը պատահի, կարե-  
լի է զայն բարեհամել՝ օդին մէջ գա-  
ւաղանով ձեծելով, այս կերպով կըր-  
նանք ջրոյ մէջ օդ մտցնել :

ՄԱՐ. — Սակայն կան ջուրեր, որ  
օդին մէջ կը գտնուին և շատ գէշ են :

ՕՐ. ԹԱԳ. — Ճահիճներու եւ լի-  
ձերու ջուրերը լաւ չեն, որովհետեւ  
անոնց մէջ առնկեր կը ներխին, և այս  
ջուրերը խիստ բիչ անգամ կը նորոգ-  
ուին կամ բնաւ չեն նորոգուիր : Օդին  
մէջէն հոսող ջուրերն լաւագոյն են.  
անձրեւի ջուրերը աւելի զուտ են,  
աղբիւրի և հորի ջուրերը երբեմն շատ

լաւ են, երբեմն օդ չեն պարունակեր  
եւ երբեմն ալ իրենց անցած տեղերը  
գտնուած օտոր մարմիններ կը պարու-  
նակեն : Երբ ջուր մը կրի ծծմբատի  
մէջէ անցնի և անով յագեալ ըլլայ,  
կերակուր եփելու չը գար, վասն զի ի-  
րեն մէջ գտնուած կրի ծծմբատը բան-  
ջարեղէնները կը կործրացնէ և անոնց  
եփելուն արգելք կ'ըլլայ : այս ջուրը  
լուացքի ալ չը գար. վասն զի կրի ծը-  
ծրմբատը օձառին հետ փոքրիկ գըն-  
տիկներ կը կաղմէ : Այս տեսակ ջու-  
րերը լաւցնելու համար պէտք է իրենց  
մէջ կալոց բնամխատ ձգել, Հանքա-  
յին ջուրեր ալ կան, որոնք երկաթ,  
ծծումբ և ուրիշ մարմիններ կը պարու-  
նակեն, իրենց անցած տեղերու գեա-  
նին կաղմութեան համեմատ :

ՄԱՐ. — Ինչպէս համար այս ջրերէն  
ոմանք տաք են :

ՕՐ. ԹԱԳ. — Երկրի խորերէն բլղ-  
խննուն համար, եւ արդէն գիտէք,  
որ երկրի խորերը շատ տաք են :


ՄԱՐ. — Ինչպէս համար ծովու ջուրը  
չը խմուիր :

ՕՐ. ԹԱԳ. — Որովհետեւ շատ աղ  
կը պարունակէ :

Զրոյ մէջ խառնուած կամ լուծուած  
աղը՝ անոր կըծու համ մը կ'ուտայ, որ  
արդէն ծանօթ է ձեզ : Պարզապէս ի-  
րար խառնուած և իրարու հետ բա-  
զադրուած մարմնոց տարբերութիւնը  
պէտք է լաւ հասկնաք : Երբ մարմին-  
ներն իրար խառնուած ըլլան, իրենց մաս-  
նաւոր յատկութիւնները կը պահպա-  
նեն, ինչպէս եթէ ջրոյ հետ աղ, շա-  
քար կամ գինի խառնուած ըլլայ,  
համն առնելով՝ լաւ կերպով կրնանք  
խմանալ թէ անոր հետ աղ, շաքար,  
թէ գինի խառնուած է, եթէ գինին  
ձերմակ ալ ըլլայ. բայց երբ մարմին-  
ները Բաղադրեալ ըլլան, իրենցմէ բոլ-  
րովին տարբեր նոր մարմիններ կը կազ-

մին : Օրինակի համար ջրոյ մէջ անկուրելի է գինքը բարդորոշ ոչ ջրածինը և ոչ թթուածինը ճանաչել . վասն զի ջուրը՝ ջրածնի կամ թթուածնի յատկութիւններէն եւ ոչ մէկն ունի , եւ իւր յատկութիւնները բարբառլին տարբեր են :

(Շարունակելի :



### ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սարբ Էջմիածին , 1876 Յ-լ 20 .

(Շարունակութիւն , տես թիւ 7 .)

Իսկ յամին 1827 իսպառ բարձաւ Պարսից իշխանութիւնը յԵրեւանոյ և Այրարատեան աշխարհէն և անկուրելի իշխանութեամբ Ռուսաց , որպէս և է ցորդ : Պէտք է գիտնալ թէ Օսմանցոց իշխանութեան ժամանակ ըստ խնդրոյ Էջմիածնի Ս . Կաթողիկոսաց , Սուլթանքն ժամանակ առ ժամանակ հրովարտակներ և վաւերական գրեր տուած են Էջմիածնի գիւղորէից , կալուածոց , արտօրէից և այլ ստացուածոց մասին , ինչպէս որ Սիմոն Կաթողիկոս կը յիշէ Ջամբր անուանեալ գրքին մէջ . թերեւս այս գրեանքը Ս . Էջմիածնի գիւղանը սրահուած լինին , թէ և կ'ըսուի թէ շատերը կորսուած են . Երեւան քաղաքը միայն երկու ժամ կենալով մեկնեցանք : Ճանապարհը խիստ վատ , մանաւանդ սարտեղնէրուն մէջ , ուր տեղ տեղ ջուրերը խոխոջ ալով կրնթանան սարտեղնէրը , Կաթողիկոս մինչ յԵրեւան շինուած է , իսկ անախ մինչև Էջմիածին չէ շինուած . այս խորգարորդ ճանապարհը հաղիւ 3 ժաւ մէն հատանելով , ահա վանօրէից կաթողիկէները երևեցան . Սեպտեմբեր 5 Կիւրակէ կէս օրին մտանք 'ի Սուրբ

Էջմիածին , եւ հիւրընկալեցին զմեզ . Ղաղարապատ կոչեցեալ հիւրատունն . Հայաստանի թագաւորանիսա Վարդապատ Մարաբաղաքը՝ Սրարատեան դաշտին կեդրոնը շինուած է . քայց այն Սրշակունի ճօխաւ թեանց կամ թագաւորական պալատներէն , իշխանոց և նսի սրարաց շինուածներէն , կամ սրարաց և աշտարակաց բեկորներէն և ոչ մի նշոյլ կամ նշմարանք անգամ չեն երեւիր , այլ նոյն քաղաքին տեղայժմ կը տեսնուի 700 տունէ բաղկացեալ գիւղ մի Հոյսաբնակ , հին քաղաքին անուամբ , տուները կաւակերտ և աղիւսաչէն , շատերը ցած և անշուք . փողոցները նեղ և աղանդի , տեղ տեղ ուռի և բարախ ծառեր անկած . գիւղացիք ունին մի ծխական Եկեղեցի , զոր Մատթէոս Ս . Կաթողիկոսը հինն քակելով դաս 'ի հիմանէ նոր կառուցած է . ունին վարժարան երկուս աշակերտաց ընդ հսկողութեամբ ձեմարանի տեսչութեան . բնակիչք երկրօգործութեան , մշակութեան արհեստի և առեւտրական գործոց կը սրարապին . աստ կը նստի Գաւառապետը (Նէլէրիկ) և դատաւորը և սոխաւաթիւ զօրք .

Արդի գիւղին հորաւային կաղըր կ'յնոյ Ս . Էջմիածնի վանքը շուրջնակէ անեպի և թրծեալ աղիւսով սարսուգած խիտ առ խիտ բուրգերով յաւաւրս Սիմէանի Կաթողիկոսի Երեւանցոց և այլոց , շինողաց և բարերարոց յիշատակարանները բուրգերուն վերայ կը տեսնուին Եկեղեցին կեդրոնատեղինէ . Իջման տեղոյն վերայ կամբառնայ սրբաձայր կաթողիկէ մեծ գմբէթը և շինուած է սեղան խորհրդոյ յաւաւրս Եղիազարու . այլ յետոյ Աստուածատուր Կաթողիկոս Համատանցի վերջտունն սրայձաւսցուցած է չորս միաձայլով փոքրիկ կաթուղիկէ և շրջապատը

վանդակի պղնձեայ . քառակուսի փոքր  
 դանդակատունները շինուած են յաւու-  
 րըս Նշխազարու , իսկ արեւմտեան մեծ  
 դանդակատունը , որ Եկեղեցւոյ աւագ  
 դրան վերայ է , շինուած է յաւուրս Փի-  
 լի գարս և Յ սիրք կաթողիկոսաց սքան-  
 շելի և նուրբ քանդակներով , Եկեղեց-  
 ւոյ շրջապատը բաց է իբրեւ ծաղիկոյ  
 և դրախտ , և ապա քառակուսի ձե-  
 ւով շինուածք , արեւմտեան կողմն  
 վեհարան , հիւսիսայինն՝ միաբանաց  
 խցերն , արեւելեանն՝ երբեմն վարժա-  
 րան և այժմ տպարան , հացի փուռ  
 և այլ կարեւոր տեղիք . հարաւայինն՝  
 սեղանատուն , խոհանոց , անտեսարան  
 մարան , սառնատուն , շտեմարան ցո-  
 րենայ և բրնձի և այլ կարեւոր պիտո-  
 յից . դարձեալ հարաւային կողմն է  
 Ղազարապատը , որ միջնադրով մի կան-  
 ջրպետի , շինեալ յաւուրս Ղազար կա-  
 թողիկոսի Ջահկեցւոյ , ուր կ'ընդուն-  
 ուին առ հասարակ հիւրեր , վանքին  
 մէջ արեւմտեան կողմը կրվագէ երկ-  
 բերան աղբիւր Գանգան անուանեալ  
 ջրէն մաս մի խողովակներով բերուած ,  
 վեհարանի արեւմտեան կողմն է պար-  
 տեղ և հարսւոյ նորին Սինոգատեղին ,  
 որոյ դիւանին մէջ կայ Ռուսաց կայսեր  
 պառկերը և Տէրութեան օրէնքը ներ-  
 կայայնող ( շէրճալը ) , որոյ առջեւ ան-  
 դամբ և այլք երդման արարողութիւ-  
 նը կը կատարեն Խաչիւ և Աւետարա-  
 նաւ , հաւատարմութեամբ վարել ի-  
 բրենց պաշտօնը և հաւատարիմ մնալ  
 Տէրութեան : Բաց ՚ի Սինոզի անդամ  
 ներէն , որոնք կը բաղկանան 4 Եպիսկո-  
 պոսներէ և 2 Վարդապետներէ , որոշ-  
 ուած է Տէրութեան կողմէն մի փոխա-  
 նորդ Բրոյխընթը և մի ատենադպիր և  
 այլ 15ի չափ բորտուղար և մի թարգ-  
 ման հաթողիկոսարանի , բաց ՚ի յՆկե-  
 ղեցականաց՝ սոցա ամասկանը Տէրու-  
 թեան կողմէն կը վճարուի : ասոնց հա-

մար գանձազան սենեակներ որոշուած է ,  
 ուր իւրաքանչիւրք իւր որոշեալ պաշ-  
 տօնին համեմատ կը գործէ : Վանքին  
 հիւսիսային կողմն արտաքոյ պարսպին  
 է Պարուար կոչուած փոքրիկ անտառը ,  
 որ Բէիզեան Մկրտիչ Պէյի այն տեղ  
 գտնուած ժամանակ տնկուած է , որոյ  
 մէջ կան պորտուու ծառեր եւ շրջա-  
 պատը պատասպարուած է . գիւղին ա-  
 րեւմտեան կողմն է վանքին մեծ վա-  
 ճառանոցը , զոր Մատթէոս Կաթողի-  
 կոսը վանքին պարսպի միջէն հանելով  
 այն տեղ փոխադրած է :

Վանքին հարաւային կողմն է մեծ  
 լիճը զոր Ներսէս Ե . Աշտարակեցի  
 Կաթողիկոսը շինել տուած է , երկայ-  
 նութիւնն 250 քայլ , իսկ լայնութիւնն  
 100 . սորա ստորոտն է յիշեալ Կաթո-  
 ղիկոսի սնկել տուած մեծ անտառը և  
 բանջարեղինաց տեղը , որոյ վերայ մէկ  
 մաս աւելցուցած է Մատթէոս կաթո-  
 ղիկոսն , նոյնչափ ևս այժմեան Գէորգ  
 Գ . Սրբազան՝ կաթողիկոսն տնկել տը-  
 ւած է , բայց տակաւին զարգացած չէ ,  
 և ամբողջ անտառին շրջապատը պա-  
 րըսպած է ապագայ վտանգներէն զերծ  
 մնալու :

Սոյն անտառին արեւելեան կողմն է  
 Գայիանէի վանքը , Եկեղեցին կոխածու-  
 քարամբք շինուած , որոյ կեդրոնը կամ  
 բառնայ սրածայր գմբէթը , աւագ սե-  
 ղանը յաջ և յահեակ փոքրիկ պահա-  
 րաններ ունի , հարաւային պահարա-  
 նէն անցուկ ճանապարհաւ կ'իջնայ ա-  
 լագ սեղանի ներքեւ , ուր է գերեզ-  
 ման սրբուհւոյն Գայիանեայ . Եկեղեց-  
 ւոյ հնութիւնը ինքնին յայտնի է . այ-  
 ժրմ նորա տեսչութիւնը յանձնուած  
 է Տփիսիսեցի Պատառեան Վահան  
 վարդապետին . սա Եկեղեցին փոքր ի-  
 շատէ նորոգած է , և դաւիթը քանի  
 մի սենեակներ նոր շինել տալով , եւ  
 ունի փոքրիկ տպարան մի . Եկեղեցւոյ

գաւիթը կը տեսնուին Կաթողիկոսաց  
 գերեզմաններն արձանագրութեամբ ,  
 Աստ թաղուած է նաև Եղիազար կա-  
 թողիկոսն , որ զինի վսխճանի Յակոբ  
 կաթողիկոսի միաբանը Էջմիածնի խըն-  
 դըրանօք բերին յԵրուսաղէմէ և նըս-  
 տուցին յԱթու Հայրապետութեան ,  
 և վսխճանած է ՌձԼԹ Թուին . սա իւր  
 կենդանութեան նորոգած է Գայիտնէի  
 վանքը շրջապատը պարսպելով և մի-  
 աբանաց խցեր և Եկեղեցւոյ գաւիթը  
 երկու խորան շինելով յանուն Առա-  
 քելոյն Պետրոսի և Պղոսի ՚ի Թուին  
 ՌձԼԵ , ինչպէս կը ակնուի արձանա-  
 գրութենէն : Սորա մերձ է Փրլան կո-  
 չեցեալ Գոմատունն , կորի ընդարձա-  
 կութեամբ շինուած , եւ ունի չորս  
 դուռ խաչաձեւ և կարեւոր սենեակ-  
 ներ , ունի մի վարդապետ վերատե-  
 սուչ , որոյ հրամանին կը հնազանդին  
 բոլոր մշակք և գործաւորք . աստ կը  
 մակաղին հօտ ոչխարաց , նախիրք ան-  
 դէոց և ջուրք անասնոց ՚ի պէտս երկ-  
 րագործութեան . կառք և երիվարք  
 այլովքն հանդերձ . աստի կըմատակա-  
 բարուի տարեկան պէտք վանկանաց ,  
 իւղ , պանիր , կաթն , առատ ցորեան  
 և այլ սերմանելի ընտեղէններ . բաց  
 ուրիշ կենդանիներէն կը դարմանեն  
 նաեւ երամակ խողից :

Վաղարշապատ գիւղին արեւելեան  
 կողմն է հնձանատեղի կուսանաց փոք-  
 րիկ աւերակ մատուռն , որոյ սրբա-  
 տաշ քարանց հիման վերայ կը շինեն  
 իւր հին դիրքովն կաւակերտ մտաուռ :  
 Սորա մերձ է Շաղակաթ անուանեալ  
 վանքն , անեւի աղիւսէ պարսպեալ , արեւ-  
 մտեան կողմը կ'տեսնուի արձանագիր մի  
 այսօրինակ՝ ՇԻՆՅՅԱԻ ՀԵՁԱՆԵԱՅ ՄԱՏՈՒՌՍ  
 Ի ԹՈՒԻՆ ՁՃԵԻ Գ " : Կ'երեւի թէ  
 սոյն քարը յիշեալ մատուռէն բերուած  
 աստ դրուած է : Եկեղեցին կոփածոյ  
 քարամբք ՚ի հիմանէ շինուած է յա-

ւուրս Նահապետ կաթողիկոսի ձեռ-  
 նասուն աշակերտին Եղիազարու , ար-  
 դեամբ Շուռթեցի Աղամալ իշխանին .  
 մէջ տեղը կամբառնայ սրածայր գրմ-  
 բեթը , ունի մի սեղան , յաջ և ահեակ  
 փոքրիկ մատուռներ . հարաւային մատ-  
 ոան մէջ ցոյց կուտան Մարիանեայ  
 կուսին գերեզմանը , որ հիւանդագին  
 գոլով՝ իւր ընկերաց հետ նահատա-  
 կութեան ասպարէզը չէր կարողացած  
 երթալ , այս տեղ ընդունած է նահա-  
 տակութեան պսակը , ունի և զանդա-  
 կատուն ՚ի վերայ դրան Եկեղեցւոյ , և  
 աստ է Նահապետ Կաթողիկոսի գե-  
 րեզմանը , որ վսխճանած է ՌձԾԻ Թը-  
 ւին . գրան բարաւորին վերայ է Եկե-  
 ղեցւոյ շինութեան մեծ արձանագր-  
 ութիւնը . ունի շրջապատը խցեր և  
 պարտէզ , և մի աշխարհական պահա-  
 պան :

Սոյն վանքի արեւելեան կողմը քիչ  
 հեռաւորութեամբ է յանուն Հռիփ-  
 սիմեոյ և ընկերաց նորա կառուցեալ  
 վանքն . Եկեղեցին քարաշէն և գմբե-  
 թաւոր վերոգրեալ Եկեղեցեաց նման  
 զանգակատունով . Աւագ սեղան եւ  
 երկու փոքրիկ աւանդատուն , հիւսի-  
 սային աւանդատունէն նեղ և անձուկ  
 մուտքով և երեք աստիճանաւ Աւագ  
 սեղանի ներքեւ կ'իջնայ , ուր է փոք-  
 րիկ մատուռ մեծամեծ քարամբք շէ-  
 նեալ , աստ ամբոխուած են նշխարք  
 սուրբ Հռիփսիմեայ և ընկերաց նորա ,  
 տախալին կ'երեւի Լաաին կղերաց  
 Սրբոց Նշխարքը գողանալու համար  
 քանդած սրմը մեծամեծ քարեր հա-  
 նելով : Այս Եկեղեցին նորոգած է Տ .  
 Կոմիտաս կաթողիկոսն , ինչպէս կը վը-  
 կայեն Աղգային Պատմագիրք , և նորա  
 գերեզմանը ցոյց կուտան աւանդու-  
 թեամբ Եկեղեցւոյ բեմին առջեւ , աւ-  
 ոանց տապանագրի և արձանագրու-  
 թեան : Հիւսիսային կողմը թաղուած

ե Փիլիսոսոս կաթողիկոսը, գերեզմանը  
յայտնի է տապանաքարիւ և արձա-  
նագրութեամբ, վախճանեալ 'ի թը-  
ւին ՌձԴ, արժան կը համարիմք միայն  
զանգակատան յիշատակարանը աստ  
դնել:

Զանգակատունս այս յիշատակ իւր կանգնեալ,  
Աշխւ Աղա Խաչիկ ի իննս պերճացեալ,  
Որ էր տոհմիւ քաջ Զնթըլմեան գովեցեալ,  
Որքի Պարոն Առաքելի յատկացեալ:

Եր Զուղայու 'ի Հնդիկս գնացեալ,  
Ի Կղկաթայ մեծ քաղաքի բնակեալ,  
Ար եւ գործով պարճանք Ազգի երեւեալ,  
Ի բարում աղքատ բարի անուամբ հաշտեալ:

ՅԱնգլիացեաց թաղաւորէն օժտեցեալ,  
Սոկեայ մանեակ եւ պատկերաւ պսակեալ,  
Իսկ զինի վախճան բարի բնկալեալ,  
Ոայ ընդ Զայի Ղասն 'ի վերայ յաւելեալ,  
Այս ինքն է թիւ Փրկչին ՌՁԳ — 1790:

Վանքը ունի քանի մի սենեակ և  
մի վերատեսուչ վարդապետ. շրջա-  
պատը բաւական ընդարձակութեամբ  
այգի և պարտէզ, և Յիկեղեցւոյ եանելի  
կողմը գերեզմանք վարդապետաց ո-  
մանց:

Արարատեան դաշտին հարաւային  
կողմն է, համանուն Արարատ կամ  
Մասիս լեռը, որոյ բարձր և անմաս-  
չեցի սոյխտակախառ գլուխը մշտնջենա-  
ւոր ձիւնով պսակուած է, ամառնա-  
յին սոթը որ դաշտին բնակիչքը խիստ  
կը տագնապէ, նորա գարուց 'ի դարս  
թանձրացեալ ձիւներուն երբէք աղ-  
գեցութիւն չընէր, և նորա յարատեւ  
ձմրան խստութիւնը չէ կարող մեղմա-  
ցընել, սորա ստորտուն էր երբեմն Ա-  
կառի գիւղը, և իւր գօտիներուն վերայ  
չնուած էր Սուրբ Յակոբայ վանքը,  
բարեհամ աղբիւրով, այլ 1840 թուին  
պատահած շարժէն Մասիս լեռան մի  
մասը և ձեան ահագին բեկորներն մեծ  
գղղմամբ իյնալով՝ վանքը և Ակոռի  
գիւղը բոլորովին ծածկեց իրենց բնա-  
կիչներով և անասուններով. այժմ կը  
լսուի թէ վրանաբակ Քուրդք նորա

աւերակները փորելով իրատակաց տա-  
կէն կահ կարասիքներ կը գտնան, այս  
լեռան մօտ կ'ամբառնայ գիւթեթաձեւ  
փոքր Մասիս կոչուած լեռը, բայց ոչ  
նոյնչափ բարձր. սորա գագաթը կա-  
րելի է կըսել, ուր կ'աւանդեն թէ կան  
հին գերեզմաններ, Մասիս լեռան շրջ-  
թաները կը ձգուին դէպ յարեւմուտս,  
և միւսն դէպ յարեւելս մինեւ Կող-  
կասեան լեռանց գօտիները. իսկ դաշ-  
տին հիւսիսային կողմը կ'ամբառնան  
Արագած լեռան երկար շղթաներն, ու  
րոյ գագաթունքն եւս թէեւ ամրան  
ձիւնապատ, բայց ոչ որպէս Մասիսն,  
Այս լեռան ստորտաներն են Բիւրա-  
կան գիւղն, Անբերդ կոչեցեալ ամրո-  
ցըն, և այլ աւերակ վանօրայք և ամ-  
րոցք. 'ի Բիւրական շինած է Գէորգ  
Գ. Վեհափառ Կաթողիկոսն ամենայն  
Հայոց յատուկ ամարանոց, ուր կան-  
ցունէ ամառնային եղանակը. օղջ  
բարեխառն, ջուրը խիստ զով եւ ա-  
ռողջարար, հանդէպ սորա կ'երեւի  
Արայի լեռը ոչ այնչափ բարձր, որ  
այլազգիք կը կոչեն Գառնը Եարդգ մէջ-  
տեղէն պատառուածք մի նշմարուե-  
լուն: Իսկ արեւելեան կողմը խիստ  
հեռուէն կ'երեւին Գեղամայ գաւա-  
ռին լեռները, այսպէս Արարատեան  
դաշտը չորս կողմէն գրեթէ լեռներով  
շրջապատած է, այսքանս բաւական  
համարելով ժամ է արդ նոր շինուած-  
ները նկարագրել:

(Շարունակելի)

Երոստայէ՛մ 1877 Օգոս. 28:  
... Խմբագիր Սիօն ազգօգուս  
թերթին:  
Օստրովաթորէ Թրիւնիկոս Խտալերէն  
լրագրոյն թիւ 167 թերթին մէջ կար

դառնալ թո՛ղի թիարան վերնագրով հե-  
տաքրքրական յօդուած մը , փութացի  
դայն թարգմանել և ներկայիւս Ձեզ  
խրկել՝ խնդրելով որ բարեհաճիք Սթօն  
ազգօգուտ թերթին մէջ անկիւն մը  
չնորհել նոյնին :

Անշուշտ եմ որ պատուարժան ըն-  
թերցողք չեն մեղադրէր զիս թարգ-  
մանութեան թերութեանց մասին :

Եւ կանխաւ շնորհակալութիւնս  
մատուցանելով մնամ . . .  
Յ . Թ . Գ .

**ԹՈՒԼՕՆԻ ԹԻԱՐԱՆԸ**

Եթէ Լուդովիկոս ԺԳ ի եւ նորա  
յաջորդին ժամանակը քննութեան առ-  
նէնք , յորում աղնուականութեան  
զեղխութիւնը եւ ապականութիւնը  
վերջին ծայր հասած էր , այն ատեն  
այնպէս պիտի յայտնուի մեզ , իբր թէ  
այն ընդհանուր ապականութեան մէջ  
չստ մը և այնչափ դո՛ւստ յանցանք-  
ներ պիտի ստուգուին : Շատ բնական  
է , որ աղնուական և հարուստ ժողո-  
վըրդեան հանդերձից ծայրայեղ պեր-  
ճանքը՝ ստորին վիճակի ժողովրդեան  
վրայ կը ներգործէ նորա վարուց ան-  
բժութիւնը շնչելով եւ եղձանելով :  
ԺՋ դարուն՝ երբ Քաղզիս սլալատա-  
կաններու և ապիկար պաշտօնեայներու  
իշխանութեան տակ կը գտնուէր՝ օ-  
րէնքները մեռեալ գրեր էին և մարդ-  
կանց իրաւունքն ու արժանաւորու-  
թիւնը եւս իրենց յարգը կորուսած  
էին : Քայց երբ անկարգութեան չափը  
լլաւ , թիւնաւորութիւնք , մարդաս-  
պանութիւնք և գողութիւնք հանա-  
պօղորդեայ եղան , այն ժամանակ իս-  
կայն տէրութիւնը ՚ի մի կողմն թողե-  
լով դանդաղութիւնը՝ ԹԻԱՐԱՆ անուամբ  
բազմաթիւ հաստատութիւններ կա-  
ռուց , որոց մէջ Տէրութեան կողմն

ճանը աշխատութիւնք եւ դժուարա-  
հաւատ խտուութիւնք սահմանուեցան  
իբր միջոց շարագործները սանձելու :  
Գաղղիոյ ամեն անկիւնը իբրև ըս-  
պառնալից սքանչելիք երեւցող բազ-  
մաթիւ թիարաններէն մին էր ԹՈՒԼՕՆԻ  
ԹԻԱՐԱՆԸ , որ այժմ եւս իբր մարդ-  
կային աղետից կեդրոն կը յիշուի : Ա-  
ւելի շաւ է ՚ի դժոխս , քան ՚ի Թուրքի  
. . . . առածը ստորին կարգի ժողովր-  
դեան շրթունքներէն կը լուռի : Ծովէն  
քիչ հեռաւորութեամբ սահմանեալ  
բարձր շինուածներ երեք հազարէն ա-  
ւելի շարագործներու ապաստանարա-  
նի կը ծառայեն : Ամբողջ թշուառնե-  
րու խումբեր , որք չուզեցին օրինաց  
առջեւ զիջանիլ մարդկային բնու-  
թեան հետ կռուելով՝ նախատա-  
նաց այս վայրը աքսորուեցան բանտին  
խոնաւուտներու մէջ շատ երկար ստորի-  
ներ դժբաղդ քոյութիւն մը ընդ քարչ  
ածելու , օրէ զուրկ միշտ շղթաներու  
ճանրութիւնը կրելու և կենաց ծան-  
րութենէն ճնշուելու դատապարտուե-  
լով : Անձանց և առնելեաց դէմ ամեն  
ոճիր ( յանցանք ) Գաղղիոյ մէջ Թուրքի  
Թիարանով կը պատժուէր : 1855 ի Օ-  
րէնքէն յետոյ գրեթէ Գաղղիոյ ապաշ-  
խարութեան կամ զգաստութեան բռ-  
լոր հաստատութիւնները անմարդա-  
բնակ եղան ՚ի շնորհս յանկոյս ծովուն  
եղած գաղթականութեան եւ որք ա-  
պա տւերեցան , միայն Թուրքի թիա-  
րանը այն շարագործաց համար պահ-  
պանուեցաւ , զորս Օրէնքը ամենամեծ  
խտուութեամբ պատժել ուզէր : Գա-  
տավճիռը հրատարակուելէն անմիջա-  
պէս յետոյ՝ դատապարտեալք հոն կը  
փոխադրուին , որով և օրինաց անաշա-  
ւութիւնը կը հաստատուի : Ի սկզբան  
այսպէս չէր , ինչ վիճակի եւ հասակի  
տէր որ ըլլային դատապարտեալք ըս-  
նատարած բանտի մը մէջ փակուելով՝

հոն կրօնասէին մինչեւ մէկ քանի հա-  
րիւրներ ժողովուէին եւ ասրա ձեռ-  
քերնին ու ոտքերնին շղթայուած, գոց  
սայլերով Թուլժի Թիարանը կը փո-  
խադրուէին : Հոն կը հասնէին կէս մե-  
ռեալ, չափազանց քաղցեալ, անգամ-  
նին այտուցեալ, որով եւ իրենց դը-  
ժընդակ աշակերտութիւնը սկսելէ յա-  
ռաջ շատ մը շաբաթներ հիւանդա-  
նացը կենալ կը հարկադրուէին, իսկ ա-  
ռողջանալէն յետոյ Թիարանի տես-  
չութեան կը յանձնուէին : Այժմ եր-  
կաթուղեաց շնորհիւ դատապարտե-  
լոց փոխադրութիւնը կարճ և դիւրին  
է, նոյն իսկ հասարակապետութեան  
հիւսիսակողմէն եկողներն երկու օրէն  
ուելի չեն ճանապարհորդեր :

Հազիւ թէ դատապարտեալք կը ժա-  
մանեն՝ հաւատարիմ ղինուորաց պահ-  
սյանութեան տակ կը դրուին, որք 'ի  
զգուշութիւն հրացանները լեցուն կը  
պահեն, ասրա այն գաւիթը կը տար-  
ուին որու դրան վրայ սա նշանաւոր  
տողը դրուած է :

Ո՛վ անցորդք, թողուցէք ամեն  
յոյս :

Այն վայրկեանէն որ երկաթապատ  
դրան երկու փեղկերը կը գոցուին դա-  
տապարտեւոց ետեւէն, նոքա աշխար-  
հիս համար մեռեալ են, նոցա համար  
այլ եւս չը կայ ոչ ընտանեկան կասլ և  
ոչ այլ ինչ : Մինչդեռ այն դժբաղանե-  
րը գաւիթը շրջապատող տախտակեայ  
նստարաններուն վրայ կը նստին, Թիա-  
րանի տեսչին բուռն պատուէրը կը  
հրամայէ նոցա կարգի մտնել : Այդ  
հրամանը կատարուելէն անմիջապէս  
ետքը՝ քննիչներէն մին հարցաքննու-  
թեան կրտսի՝ մասամբ իմն նորեկնե-  
րու նոյնութիւնը օրոշելու և մասամբ  
իմն կենցաղավարութեան կերպերը  
սահմանելու համար : Գլխաւոր ցու-  
յակի մը մէջ բողոքին քաջութիւնը (ա-

րարք) նշանակուած է, որք յետոյ այլ  
և այլ դատարաններու դիտողութիւն-  
ներով կ'ամբողջանան : Այս կանոնը  
(ստիտութիւնը) լրանալէն յետոյ իւ-  
րութանչիւր դատապարտեալի համար  
թիւ մը կ'որոշուի, որ նորա մակա-  
նուան կը փոխանակէ : Եթէ հարցա-  
քննութեան ժամանակ մին համար-  
ձակի հակառակիլ, կամ ստել 'ի պու-  
տասխանս, սլաշոծնատարք չեն յապա-  
ղիր թիարանին օրինաց անաչտու-  
թիւնը մի ըստ միջէ թուել, և կըսուի  
թէ յանցաւորներէն ամենէն անտար-  
բերներն անգամ այս թուումէն ցըն-  
ցուած են :

Բոլոր թիւերը մայր հաշոյն մէջ  
նշանակուելէն յետոյ՝ թիապարանները  
մեծ սրահ մը կը տարուին, ուր տախ-  
տակեայ լայն դաշտեր պատրաստուած  
կան հինօրեայ դատապարտեալներէն  
շրջապատեալ, որք իրենց ընկերները  
լուալու և մտքերլու սահմանուած են  
եւ հաճութեամբ իրենց պաշտօնը կը  
կատարեն : Երբ նորեկ թիապարանները  
կը մերկանան, միւսները կարծր խողա-  
նակ և դիմացկուն օձառ առած կը մօ-  
տենան ու դաշտերուն մէջ ընկղմելով  
ղանձք եռանդով կը մտքերն Թիա-  
պարտներուն կենաց ինչպէս ըլլալուն  
ճաշակը զգացնելով, ոմանց արիւնը  
կըսիսի վազել խողոնակներու պատճա-  
ռած վերքերէն : Անգութ գործակա-  
տարք՝ առանց ունկն դնելու զահից ցաւ  
ւոց, ցոյցերուն և աղաղակներուն, չեն  
կասիր իրենց պաշտօնէն մինչեւ որ աղ-  
տեղութեան ամեն հետքը քերուի :

Ներս մտած ատեննին անխտրա-  
բար իրենց տրուած անթափ սրբիչ  
ներով հազիւ հաղ մարմիննին կը ջը-  
փեն և ահա հաստատութեան անա-  
չառ բժիշկը իր նորեկ պաշտպանեալ  
ներուն այցելութեան կրտսիս Զարմա-  
նալի անտարբերութիւնը դատապարտե-

լոյ իւրաքանչիւրին կը հարցնէ ենթա-  
կայ եղած հիւանդութիւնները , խնա-  
մով դանտիք կը քննէ , միանոց զօրու-  
թիւնը կը փորձէ և ըստ կարի աշխա-  
տանք կը նշանակէ : Ատրժ աչոյ հա-  
յեցուած մը եւ երկար հմուտ թիւն  
պէտքէ իւրաքանչիւր դատապարտեա-  
լն վիճակը ճանաչելու համար : Նոյն  
տօմարին մէջ արձանագրող սրիկաները  
առանց որ և իցէ ստուծենէ խոյս տա-  
լու ամեն ջանք եւ փոյթ կ'ընեն ,  
որպէս զի յաջողին բժիշկները պտու-  
րել իրենց համար սահմանուած աշխա-  
տանքէն զերժանելու համար : Ասանցմէ  
շատերը , գլխաւորապէս Թիարանի ինչ  
բլալը գիտցողները , հիւանդ կը ձե-  
ւանան և ամեն միջոց 'ի գործ կը գնեն  
հիւանդանոցին մէջ փոքր տեղ մը ձեռք  
ձգելու համար : Ոմանք իբր կայծակ-  
նահար , գետին կ'իյնան անդամները  
գալարելով և կը թաւալին մարմնոյն  
միանոց ցնցման մէջ ընկղմածի նման .  
ուրիշներն ալ լալով կը հազան , թոքե-  
րը նկատել կ'տկնարկեն , օգնութիւն  
կը խնդրեն և յանուն Աստուծոյ զը-  
թուութիւն կը հայցեն : Անկարեկից բը-  
ժիշկը այս ամենը տեսնելով հանդէս-  
ները գաղբեցնել կը հրամայէ նոցա .  
եթէ շարունակեն , կը գանահարին :  
Առաջին անգամ չէ որ այդպէս լանջ  
քի և աչքի հիւանդութիւնները կը  
կեղծուին : Եթէ խարեբայք բժիշկին  
ազգարարութեանց ունկնդրութիւն չը-  
նեն՝ սպառնալիք իրօք կը գործադրուին :

Բժշկական այցելութեան հետ Թի-  
արանին քննիչինն ևս տեղի կ'ունենայ ,  
որոյ պաշտօնն է թիապարտներուն բով  
զէնքեր , խարտոյներ , առատան և այլ  
փախուստ դիւրայնող ուրիշ գործիք-  
ներ գտնուիլը արգիլել : Երկար հմուտ-  
թիւնը և փախտեան երկիւղը քննիչին  
տեսութիւնը կը օրէ , որպէս զի բան մը  
չը սահի իբ տեսութենէն : Մինչդեռ

դատապարտելոյն զգեստը մի կողմ կը  
ձգուի , նա աչալըջութեամբ դայն կը  
քննէ , բոլոր գրպանները կը կրկնէ ,  
ասթարին ամեն կողմը կը շոշափէ եւ  
թիապարտին մօտենալով նորս բերա-  
նըն , ոնգունքը , ականջներուն ետին ,  
մաղերու մէջ և բազուկի տակը կը նայի  
մինչեւ որ բոլորովին ապահով ըլլայ թէ  
մարմնոյն և ոչ մի կողմը իւր քննութե-  
նէն վրիպած է , ըստ որում առաջին  
անգամը չէ որ բերանն ու ոնգունքը  
արգիլեալ բանի մը թագստեան ծա-  
ռայեցին : Մյուրութեան հակամէտ այն  
ապիրտաներու խորամանկութիւնը ա-  
մեն միջոց գտնելու դասեր կը տայ բը-  
գուշութիւնը ծաղրելու համար որչափ  
ալ խիստ ըլլայ , այսու ամենայնիւ միւ-  
շեւ այսօր իսկ սղոցներու , խարտոյնե-  
րու եւ ելլարաններու միջոցաւ շատ  
փախուստներ պատահած են : Երբև  
այն անձին , որ արգելեալ նիւթ մը  
կ'ունենայ : Գաւազանի հարուածներն  
ու զնդանը իրեն կ'սպասեն :

( Եարանախիւ )

ՆԵՐՔԻՆ ԾՈՎ,  
ՅԱԼ ՃԵՐԻՍ

Մեր ընթերցողաց հաղորդեցինք  
Գաղղիոյ գիտութեանց Ահադէմիայէն  
ընարեալ Յանձնաժողովը մը ներկայա-  
ցուցած տեղեկագրի եզրակացութիւն-  
ները 'ի մասին Պ . Բուտէր դիտնակա-  
նին աշխատութեանց , որ կը վերաբե-  
րէին Ալճերիոյ հարաւակողմը ներքնա-  
ծով մի բանալու խնդրոյն : Այս խընդ-  
րոյն գէմ շատ մի կարեւոր նոր հակա-  
ռակ առարկութիւններ եղած են , ու  
բովք ոչ միայն կը մերժեն նոր ծովէն  
յառաջ գալիք շոգիացմամբ Ալճերիոյ

մէջ ըլլալիք ջրասօսական եզտնակաւու  
բուժիւններն , այլ և կ'ըսեն , որ այս  
ծովին բարձրավանդակ եղբերը սաս-  
տիկ տկար զսու ՚ի թափ մի պիտի ու-  
նենան և այս ատերը առողջութեան  
կտրի վնասակար պատճառ մի պիտի  
ըլնն ամբիկեան հեզիչ արեգական  
ջերմութեամբ գործարանաւորնիւթոց  
տարրալուծմամբ : Պ . Բուտէր այս  
ընդդիմաբանութեանց պատասխանած  
է ծանուցագրով մի , զոր Պ . տը Լէ-  
սէբս վերասին գիտութեանց Ակադէ-  
միային ներկայացուցեր է . ուր նոր  
ընդդիմաբանութեանց հանդիպեր է :

Շոգիացման մասին՝ Սուէիզի ջրանց-  
քին վերայ եղած փորձերէն կը հետեւ-  
ընէ , որ նոր ծովը , որը 39 միլիոն  
խորանարդ մեզր ջուր պիտի շագիա-  
ցնէ : Հարաւային , հար . — արեւելե-  
տան , կամ հար . — արեւմտեան հողմե-  
րը՝ որ այս երկրին տիրող հողմերն են ,  
շագիացեալ ջրոյ այս հակայ կոտոր բնա-  
կանաբար պիտի մղեն դէպ ՚ի հիւ-  
սիս , այսինքն Ալճերիի և Թունուզի  
վերայ :

Արդ՝ մի կողմէն հաշիւը կը ցու-  
ցնէ , որ այս շագին բաւական պիտի  
ըլլայ սովորական ճնշման և 12 սասի-  
ճանի բարեխառնութեան տակ կիսով  
չափ յագեցնել 24 մեզր բարձրութիւն  
ունեցող և ամբողջ Ալճերին ու Թու-  
նուզը ծածկող օդոյ խաւ մի . միւս  
կողմէն եւս յայտնի է , որ խոնաւ օդոյ  
այսպիսի խաւ մի պիտի ունենայ ցե-  
րեկները արեգակնային ճառագայթից  
ատարը մեղմելու յատկութիւնը , իսկ  
գիշերները՝ ջերմութեան ճառագայ-  
թութեան յառաջ եկած ցրտացումը :

Բաց յայտնանէ , շագին ուրիշ ար-  
գասիք մի եւս պիտի ունենայ , այն է  
խտանալով անձրեւի , և նոյն իսկ ձիւ-  
նի պիտի փոխուի , որովհետեւ շագին  
բարձրանալով գրեթէ անմիջապէս Օ .

ընս լերանց բարձր շղթային պիտի պա-  
տահի , որ իբրեւ արգելիչ պիտի բռն-  
նէ : Երբ հարաւային հողմ մի , կիսով  
չափ յագեալ ջրոյ շագիով , այս զան-  
գուածը չափէն աւելի ստուարայնէ ,  
բաւական պիտի ըլլայ բարեխառնու-  
թիւնը 25 սասիճանէն 14 սասիճանի  
իջեցնել , քանի որ հարաւային կողմը  
մինչեւ անգամ ամառան սաստիկ ատե-  
նը ձիւն պիտի գտնուի : Շոգիացումը  
պիտի կրկնապատկի հար . — արեւելեան  
հողմով , որոյ մեծ պակասութիւնն է  
իւր շափազանց չորութիւնը . բայց  
դէպ ՚ի Օրէն լեռները մէկ օրուան մէջ  
78 միլիոն խորանարդ մեզր ջուր պի-  
տի տանի :

Այն առարկութեան , որով կ'ըսեն  
թէ ներքնածովուն փոփոխակի հեղե-  
ղեալ և ցամաքեալ ատերը տկար հա-  
կում մի պիտի ունենան , կը պատաս-  
խանէ Պ . Բուտէր հաստատելով՝ որ  
կարծուածին չափ տկար չը պիտի ըլ-  
լան : Նոյն իսկ շատ մասանց մէջ , ծու-  
վեղերաց կարի մօտ , ջուրը 20 , մինչև  
30 մեզր խորութիւն պիտի ունենայ :  
Իսկ Միջերկրականի հետ ունեցած հա-  
ղորդակցութիւնը միշտ շագիացմամբ  
եղած ջրոյ կորուստը պիտի ընցնէ :  
Նոյնպէս ներքնածովը ոչ միայն առող-  
ջութեան վնասակար չը պիտի ըլլայ ,  
այլ օգտակար , որովհետեւ պիտի ծած-  
կէ շատ մօրուտ տեղեր , որոց ազդե-  
ցութիւնը աւելի վնասակար է առող-  
ջութեան : Բացուելիք ծովուն տեղը  
կայ հիմա հազարաւոր քառակուսի  
քիլոմեդրներով ընդարձակութիւն ու-  
նեցող ճախճախաւ գաւառ մի , որ  
ձմեռն անմատչելի կ'ըլլայ , որովհետեւ  
պրտուններով և խոշոր եղեգներով կը  
ծածկուի . իսկ ամառը ցամաքելով՝  
զանազան տխտերու պատճառ կ'ըլլայ .  
ներքնածովը այս մօրուտ գաւառը պի-  
տի գոցէ ջրոյ թանձր խաւով մի :

Վերջապէս ըստ Պ. Բուտերի ներքինաժողովուն գլխաւոր օգուտները պիտի ըլլան, Ալճերիի և Թունուզի կլիմային հիմնական բարեփոխութիւն. Օրէսի և Աթլասի հարաւային երկիրներուն, նոյնպէս կեդրոնական Ափրիկէի կարաւանաց համար վաճառականական նոր ճանապարհ մի. Ալճերիի համար կատարեալ ապահովութիւն:

Բուտերի այս եղբակցութիւնները Ակադէմիայի Յուլիս 2ի նիստին մէջ Պ. Գոնսօն անդամը մի առ մի քննադատեց՝ հետեւեալ պատճառաբանութեամբ:

1°.-Ներքինաժողովը Ալճերիի և Թունուզի ընդհանուր կլիման չը պիտի կրնայ բարեփոխել. որովհետեւ ըլլալիք շոգիացումը պիտի ցրուի Սահարայի մէջ, կամ պիտի կորսուի Միջերկրականի վերայ և կամ Օրէս շղթային մէջ սահմանաւոր միջոցներու վերայ պիտի խտանայ: Ընդունիմք, կ'ըսէ, որ կլիման պիտի չափաւորուի և նոր մշակութեանց առիթ պիտի ըլլայ. բայց այսու չը կ'փոխարինուիր այն կորուստը, որոյ ենթակայ պիտի ըլլայ արմաւի արտադրութիւնը, որ այս գաւառին բուն հարստութիւնն է: Եթէ արդի արթեան ջրհորները ընդարձակ ուլափաները ուսպելու չտի բաւական ջուր չեն մատակարար, զանոնք բազմացնելով ամեն գաւառներու մէջ երկրագործական ամեն պէտքերը կը լքուին:

2°.-Նոր ճանապարհը վաճառականութեան երեւելի ծառայութիւն մի չը պիտի կրնայ մատուցանել, որովհետեւ կեդրոնական Ափրիկէի կարաւանները իրենց ստիւրական ճանապարհէն յետո չը պիտի կասին, այլ պիտի շարունակեն իրենց ընթացքը դէպ ՚ի Մարոք և Թրիպոլի: Ի բաց աւեալ գերեաց վաճառականութիւնը, կարաւաններուն փոխադրած վաճառք-

ները երեւելի բան մի չեն. որովհետեւ անոնց փոխադրածն է սակաւ ինչ օսկեաւաղ, փշատամ և արծուեփետուր: Բաց յաստի, ներքինաժողովուն մեծ մասը պիտի տարածուի Թունուզի իշխանութեան մէջ և այսու կարելի պիտի ըլլայ կասկածիլ, որ կարաւանները աւելի Միւսլիման իշխանութեան մի մէջ պիտի տանին իրենց վաճառքները. քան թէ Կոստանդինի գաւառին մէջ:

3°.-Գաւառին առողջարհական պայմանները բարելաւելէ շատ հեռի պիտի ըլլայ ներքնաժողովը: Ընդհակառակն աւելի հաւանական է կարծել, որ երկիրը անբնակելի պիտի ըլլայ ծովուն ցած ամանց վերայ գործարանանաւոր նիւթոյ տարրալուծմամբ: Ներքին ծովը մղմամբ պիտի աւելցնէ արթեան խաւին աղը, որով ջուրերը անբնակելի պիտի ըլլան և սուգման անյարմար: Օդոյ խոնաւութիւնը եթէ յառաջ գայ, արմաւեաց քանակութեան և Մարոպոցոց առողջութեան վնասակար պիտի ըլլայ:

4°.-Անսպասի ծովը Ալճերին չ'ապահովելէ զատ Գաղղիական իշխանութեան շարունակական վտանգ մի պիտի ըլլայ: Այս ծովը, որոյ մուտքը և մեծ մասը Թունուզի մէջ պիտի ըլլայ և միայն արեւմտեան եզերքը Ալճերիի մօտ, անընդհատ հսկողութեան առիթ պիտի ըլլայ արգիլելու համար օտար վաճառականները, որք արդէն հարաւային երկիրներու վաճառքներով կը լքուին Ալճերին. և մանաւանդ պատերազմի ատեն ռազմավթելից գաղանի փոխադրութիւնը այն ժողովրդոց մէջ այնչափ ստիպելի պիտի ըլլայ, որոց հնազանդութիւնը շատ դժուարին է անմիջական սահմանակցութեան պատճառաւ:

Այսպէս Պ. Գոնսօն բացուելիք նոր ծովուն մատակարարելիք օգուտ-

ներն իրական չը համարիր և հարիւրու-  
 ւոր միջինները , որ այս ձեռնարկին  
 համար պիտի ըլլան , պարզ կորուստ  
 մի կը սեպէ . և աւելի յառաջ կ'երթայ  
 բսելով , որ եթէ այդ ծովը առաջունէ  
 ըլլար , այնչափ վնասակար պիտի լինէր  
 Քաղզիական շահույ , զոր հարկ պիտի  
 ըլլար գոցել :

Անշուշտ Պ . Բուաէր և իւր կու-  
 սակիցները այդ ընդդիմախօսութիւն-  
 ները անպատասխանի չը պիտի թո-  
 ղուն : Պիտի պատասխանեն , պիտի  
 հերքեն իրենց հակառակորդաց կար-  
 ծիքները և այս վերջինները վերստին  
 պիտի խօսին և դործը համաձայնու-  
 թեան շատ մօտ չէ և այժմէն անկու-  
 բելի է կանխագուշակել , թէ ո՛վ պի-  
 տի յաղթանակէ : Միայն այս յայտնի  
 է , որ Սուէիդի պարանոցի բացման խոր-  
 հուրդին դէմ ասկէ պակաս ընդդի-  
 մութիւններ չեղան , բայց այսօր հա-  
 զարաւոր նաւերու ճանապարհ կը տայ  
 և անոնք որ ամենէն աւելի կը հակա-  
 աակէին , այժմ ամենէն աւելի կը շա-  
 հին Սուէզի ջրանցքէն :

Եթէ կան կարգ մը անձինք , որ  
 դիւրու կը սիրահարին երեւութապէս  
 ամեն մեծ խորհուրդներու , կան ու-  
 րիշներ ալ , որ ընդհակառակն ամեն  
 գաղտնիստ անհետեւ կը համարին ,  
 զոր իրենք չեն յորոցած . բայց այն դա-  
 ղափարը , որ ճշմարիտ է , միշտ կը յաղ-  
 թանակէ : Երբ առաջին անգամ Անգ-  
 զիան Քաղիոյ հետ երկաթուղիով մի-  
 ադնելու համար Մանչի տակէն ստո-  
 բերկրեայ ճանապարհ մի բանալու խոր-  
 հրդին վերայ կը խօսուէր , շատ մի ե-  
 բէւելի երկրաբաններ սխալցին հաս-  
 տատել ծակուելիք տեղը անգլին  
 խուժերու գոյութիւնը , որոնք գոր-  
 ծին յաջողութիւնը անկարելի պիտի ը-  
 նէին . բայց այսօր ամեն ոք համոզուած  
 է , որ այս հսկայ գործը համեմատու-

բար շատ դիւրին է : Եւ անշուշտ մե-  
 տակոյ տպագայի մը մէջ այս գործը  
 'ի կատար հասած պիտի տեսնուի .  
 թերեւս այսպէս ըլլայ նաեւ Պ . Բու-  
 աէրի յատակագիծը , որ այնչափ բու-  
 ուրն կերպիւ կընդդիմաբանուի Ակա-  
 դէմիայի միջանի անդամներու կողմէն :



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Բ

Ամսոյս 24ին Ասորոց Սրբազան  
 Պատրիարքը որ բաւական ժամանակէ  
 'ի վեր Եւրոպա և Հնդկաստան կը ճա-  
 նապարհորդէր , աեղս ժամանեց : Ս .  
 Աթոռոյս կողմէն սիրալիք և պատուա-  
 լիւր կերպիւ ընդունուեցաւ . դիմուե-  
 բութեան զրկուած էին Գեր . Ներսէս  
 Եպիսկոպոսը , Արժ . Աւագ-Թարգման  
 և Մկրտիչ վարդապետք երկու պա-  
 հակներով : 'Նախ' մեր վանքը եկաւ ,  
 Ս . Քլոսադրի վրայ ուխտ և երկրպա-  
 դութիւն ընելէ զիտի 'ի պատրիարքա-  
 րան ելաւ , սւր Ս . Պատրիարքը մեծ  
 հիւրասիրութեամբ ընդունեց . բաւա-  
 կան տեսակցութենէ յետոյ իրենց վան-  
 քը գնաց վանուցոս եպիսկոպոսաց և  
 վարդապետաց ուղեկցութեամբ . իսկ  
 երկրորդ օրը Ամեն . Ս . Պատրիարքը  
 այցելութեան գնաց :

— Յաւօք սրտի այս անգամ Ազգ .  
 լրագրոց մէջ կարգացինք Ազգ . Ժողո-  
 վոյ մէջ տեղի ունեցած յուզումներն և  
 պաշտօնէութեանց դէմ եղած անուա-  
 նարկութիւններն : Ի հարկ է ամեն ժա-  
 մանակ այսպիսի ընթացք մի դատա-  
 պարտելի է , ըստ որում հետեւութիւ-  
 նը միշտ կործանում է . բայց մանաւանդ  
 ներկայ պարագայից մէջ , յորում աե-  
 բութիւնը և մեր դժբաղդ ազգը մեծ  
 տազնապի և ճգնաժամի մէջ են , անձ-  
 նական կիրքերու տեղի տալը՝ պար-  
 ղսպէս ազգատեցութիւն եւ ազգա-  
 մատնութիւն է :

## Պ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կարևորութիւն ուսման Ա. Գրուց. (Շար. Լ 479)	169-173
Զգուշաւորութիւն . . . . .	173-177
Մարդկային կեանք. (Շարտանախիւ)	177-179
Բնագիտութեան և Տիեզերադարձութեան վրայ պարզ խօսակցութիւն. (Շարտանախիւ)	180-183
Ուղեւորութիւն Գ Ս. Էջմիածին. (Շարտանախիւ)	183-186
Թուլանի Թխարանը. (Շարտանախիւ)	186-189
Ներքին ծով յԱլշէրիա . . . . .	189-192
Ե Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ի Ա Կ Ա Ն Ք . . . . .	-192

---

## Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Մ Ա Ն Բ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսի բաղկացեալ մ'կուկն ութամսայ լիզմով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Ալեքիաի, ճանապարհի ծախքով միասին, կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տարակի առնել աւարդը պէտք է ամեն մէկ տետրին շորո Գ ա. հէկան վճարել :